Azg
armenian daily

10 ՅՈՒՆՈՒԱՐ 2003 ՈՒՐԲԱԹ 3(2688)

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Երբ արժանապատվությունը դառնում է խաղաթուղթ

Տ. Նաղդալյանի սպանությունը շահարկումներում

ԳՈՌ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Մեր գործընկերոջ՝ լրագրող, հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահ Տիգրան Նաղդալյանի եղերական սպանությունը, ինչպես նաեւ դրան հաջորդած ժամանակահատվածը ցավալիորեն ոչնչով չեն տարբերվում դրանից առաջ կատարված սպանությունների շահարկումներից, թեեւ թվում էր, թե գոնե լրագրողական դաշտը զերծ կմնա հերթական անգամ ճոճիմ շահարկումների ոլորապտույտն ընկնելուց:

Ոչ ոք չէր էլ կասկածում, որ քաղաքական նման բարդ հարաբերությունների եւ նախընտրական շրջանի լարվածության պայմաններում քաղաքական կշիռ ունեցող հայտնի լրագրողի սպանությունը դառնալու է փոխադարձ մեղադրանքների միջոց: Թեեւ մինչեւ հիմա սպանության հանգամանքները գոնե նվազագույն չափով հայտնի չեն, այնուամենայնիվ, կատարվածի հենց հաջորդ օրն առանձին ուժեր, եւ հատկապես քաղաքական շրջանակներից, չգիտես որտեղից վերցնելով սկսեցին ցեխ շպրտել ընդդիմության երեսին: Անգամ մասնացույց էին արվում սպանության պատվիրատուների հավանական շրջանակները՝ ուղղակիորեն կապելով առաջիկա նախագահական ընտրություններին Ռ. Քոչարյանի քարոզչական մեքենան արգելակելու՝ ընդդիմադիրների ցանկությունների հետ: Դա փաստորեն սպանության առաջին վարկածն էր, որը հետեւողականորեն փորձում էր հիմնավորել նաեւ հանրային հեռուստաընկերությունը:

Ակտիվ մամուլի գործունեության այս տարվա մեկնարկին զուգահեռ հակառակ ճամբարն անմիջապես հիստերիա բարձրացրեց, թե իշխանամետ լրատվամիջոցները սպանությանը հաջորդած օրերին խուսափել են հրապարակել իրենց ցավակցական ուղերձները եւ փաստորեն անուղղակիորեն մատնանշել են հայտնի լրագրողի սպանության նկատմամբ ընդդիմության իբր անտարբերությունը: Այդպես է դա, թե՞ ոչ, հայտնի է միայն հեռուստաընկերություններին:

Տես էջ 2

250 հազար դոլար պարգեւատրում Տ. Նաղդալյանի սպանության բացահայտման համար

ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ ոստիկանության եւ ՀՀ ԱԱ ծառայության քննչական-օպերատիվ խումբը շարունակում է Տիգրան Նաղդալյանի սպանության դեպքով հարուցված քրեական գործի նախաքննությունը:

Գործի քննությանն օժանդակելու նպատակով մի շարք մասնավոր կազմակերպությունների եւ անձանց կողմից ստեղծվել է հիմնադրամ, որի միջոցները նախատեսված են այն անձանց պարգեւատրման համար, որոնց հայտնած տեղեկությունները կնպաստեն հանցագործության բացահայտմանը: Դրամական միջոցների տնօրինումը հանձնված է ՀՀ գլխավոր դատախազին:

Հայաստանի գլխավոր դատախազությունը դիմում է քաղաքացիներին՝ Տիգրան Նաղդալյանի սպանությունը բացահայտող հավաստի տեղեկություններ հաղորդելու խնդրանքով եւ տեղեկացնում, որ նախատեսվել է 250 հազար ԱՄՆ դոլարի դրամական պարգեւատրում այն անձին, որի հայտնած տեղեկությունները կնպաստեն սպանության բացահայտմանը, կատարողին կամ կազմակերպիչներին ձերբակալելուն: Այդ գումարը կվճարվի կանխիկ կամ փոխանցումով, ցանկացած արժույթով, ցանկացած երկրում:

Դրամական պարգեւատրումներ են նախատեսված նաեւ նախաքննությանն օգտակար այլ տեղեկությունների համար:

Տեղեկատվության աղբյուրի բացարձակ գաղտնիությունը երաշխավորվում է:

Տեղեկությունները հայտնելու համար կարող եք զանգահարել 58 32 14 հեռախոսահամարով:

Հանս Բլիքսը զեկուցում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին

«Դեռեւս չենք գտել որեւէ ծխացող զենք»

Երեկ, Երեւանի ժամանակով ուշ երեկոյան Իրաքում ՄԱԿ-ի տեսուչների ղեկավար Հանս Բլիքսը փակ նիստում զեկուցում էր ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 15 անդամ երկրների ներկայացուցիչներին իր գլխավորած խմբի սուզումների արդյունքների մասին: Նիստերի դահլիճ մտնելուց առաջ նա լրագրողներին հայտարարեց. «Դեռեւս չենք գտել որեւէ ծխացող զենք: Տակավին նոր ապացույցներ չկան Իրաքում զանգվածային ոչնչացման զենքերի առկայության մասին, թեեւ բազմաթիվ հարցեր դեռեւս մնում են առանց պատասխանի»: Պատասխանելով լրագրողներից մեկի հարցին Հանս Բլիքսն ասաց, թե ժամկետ չի նշանակված Իրաքում իրենց առաքելության համար եւ, հետեւաբար, փետրվարը չի կարող իրենց գործունեության ավարտը լինել, սուզումները կշարունակվեն այնքան՝ որքան անհրաժեշտ լինի:

Մյուս կողմից Ֆրանսիան, որն այժմ նախագահում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նիստերը, Մեծ Բրիտանիայից եւ Մ. Նահանգներից պահանջեց ՄԱԿ-ի տեսչական խմբին տրամադրել իրենց ձեռքի տակ եղած հետախուզական տվյալները՝ դյուրացնելու համար նրանց գործը:

Ինչ վերաբերում է ՄԱԿ-ի տեսուչներին, որոնց թիվն արդեն հասել է 300-ի, երեկ առաջին անգամ նրանք ձեռնարկեցին օդային սուզումները: Տեսուչներն ուղղաթիռներով անցան կասկածվող վայրերի վրայից եւ նկարահանումներ կատարեցին:

ՀԱՍՏՈՍ

Ռոբերտ Քոչարյանը պաշտոնական այց կկատարի Ռուսաստան

ԵՐԵՎԱՆ, 9 ՀՈՒՆՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հունվարի 16-18-ը Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանը պաշտոնական այց կկատարի Ռուսաստան: Ինչպես «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ»-ին հայտնեցին ՀՀ նախագահի մամլո ծառայությունում, այցի ընթացքում կքննարկվեն ռուս-հայկական համագործակցության, միջազգային ասպարեզում, այդ թվում ԱՊՀ եւ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության շրջանակում Ռուսաստանի եւ Հայաստանի փոխգործունեության առանցքային հարցերը:

ԿԸՀ-ն արդեն հրավերներ է ուղարկել դիտորդներին

ԵՐԵՎԱՆ, 9 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Փետրվարի 19-ին կայանալիք նախագահական ընտրություններին դիտորդական առաքելություն իրականացնելու համար ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովն արդեն հրավերներ է ուղարկել մի շարք միջազգային կազմակերպությունների եւ բազմաթիվ երկրների ԿԸՀ-ների ղեկավարների: Ինչպես հայտնեց ԿԸՀ լրատվական ծառայության ղեկավար Լիլիթ Սեդրակյանը, հրավերներ են ուղարկվել ԱՊՀ անդամ երկրների կենտրոնական ընտրական հանձնաժողովների ղեկավարներին, ինչպես նաեւ Հունգարիայի, Թուրքիայի, Բուլղարիայի, Խորվաթիայի, Լեհաստանի, Լատվիայի ԿԸՀ նախագահներին, ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների եւ մարդու իրավունքների գրասենյակին (ԺՀՄԻԳ), Եվրախորհրդին: Համաձայն «ՀՀ ընտրական օրենսգրքի», դիտորդները հավատարմագրվելու համար դիմումները ԿԸՀ-ին պետք է հանձնեն ընտրությունները նշանակելու օրվանից հետո, բայց ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 10 օր առաջ:

Ղարաբաղի խնդրի լուծման համար Ադրբեջանին հզոր բանակ է պետք

Բաքվում ասել է թուրք գեներալը

ԲԱՔՈՒ, 9 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ադրբեջանի պաշտպանության նախարար Սաֆար Աբիեւի եւ Թուրքիայի զինված ուժերի գլխավոր շտաբի հետախուզական վարչության պետ, գեներալ Հուսեին Գոխունի հանդիպման ժամանակ, վերջինս՝ անդրադառնալով դարաբաղյան հակամարտության կարգավորման հարցին, ասել է, թե այդ խնդրի լուծման համար Ադրբեջանը պետք է հզոր բանակ ունենա եւ որ Թուրքիան միշտ էլ օգնելու է Ադրբեջանին այդ հարցում: Նա կողմ է արտահայտվել ադրբեջանա-թուրքական ռազմական համագործակցությանը:

Ադրբեջանական «525-րդ» թերթը գրում է, որ ադրբեջանցի նախարարն իր հերթին հիշեցրել է, որ անցյալ դարի 90-ական թվականներից սկսած Թուրքիան ակտիվորեն օգնում է Ադրբեջանին ռազմական շինարարության գործում, եւ այդ համագործակցությունն այժմ հասել է ռազմավարական համագործակցության մակարդակին: Աբիեւի խոսքերով, Վրաստանից ռուսական ռազմահանգրվանի Հայաստան տեղափոխումը «ամրապնդում է Հայաստանի ադեկվատացողական դիրքորոշումը եւ հակասում է ԵԱՀԿ սամբուլյան գագաթաժողովի որոշմանը»: Աբիեւն ասել է, թե այդ օգնությունը Հայաստանին «անտեղի կորչում է», քանի որ Հայաստանը «անաղարտ եւ ահաբեկչական պետություն է»:

Հնդկաստանն ընդունում է երկքաղաքացիության օրենք

Երեկ մասնակցելով օտար երկրներում ապրող հնդկաստանցիների համաժողովին, վարչապետ Աթալ Բիհարի Վաջպային հայտարարեց, որ իր կառավարությունը որոշում է ընդունել երկքաղաքացիության օրենք անցկացնելու, որը Հնդկաստանից դուրս բնակվող եւ օտարերկրյա քաղաքացի հանդիսացող ծագումով հնդիկներին հնարավորություն կտա ստանալ նաեւ Հնդկաստանի քաղաքացիություն: Ըստ իրազեկ աղբյուրների, հնդկական սփյուռքը կազմում է 25 միլիոն մարդ: Երկքաղաքացիության մասին նոր օրենքի նպատակն է երկրում ներգրավել օտարերկրյա ազգակիցների նյութական ներդրումները: Մանավանդ որ, բազմաթիվ են տարբեր երկրներում ապրող հարուստ հնդիկները, որոնք հայտնի են հյուրանոցային եւ ռեստորանային բիզնեսի, գոհարեղենի, գորգերի, ինչպես նաեւ բարձր տեխնոլոգիաների ասպարեզներում:

ԱՍՓՈՓՈՒՄ

2002 թ. ֆինանսական տարին ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարի մատուցմամբ

«Եթե առաջիկա 2-3 տարիներին տնտեսական աճը շարունակվի նման տեմպերով, ապա մեր երկիրը կհայտնվի բոլորովին այլ իրավիճակում», երեկ «ամենայն պատասխանատվությամբ» հայտարարեց ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Վարդան Խաչատրյանը: Ներկայացնելով 2002 թ.-ի տարեկան ցուցանիշները, նախարարը մատնանշեց համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ), պետբյուջեի մուտքերի եւ ծախսերի աճի առկայությունը:

Տնտեսական, այսինքն՝ ՀՆԱ աճը կազմել է 12-12,7 տոկոս, ինչը չունի իր նախադեպը: Եկամուտները կազմել են 198,4 մլրդ դրամ, պլանավորված 194,6 մլրդ դրամի փոխարեն: Հարկային մուտքերը կազմել են շուրջ 105 մլրդ, մաքսային մուտքերը՝ 92,7 մլրդ դրամ: Այս դեպքերում եւս նախանշված ցուցանիշները գերակատարվել են: Մի խոսքով, տոկոսային առումով եկամուտներն ապահովվել են 103 տոկոսով, իսկ ծախսերը 105 տոկոսով: Ծախսերը 2002 թ. պետբյուջեով նախատեսված 228 մլրդ դրամի փոխարեն կազմել են 241 մլրդ դրամ:

Վարդան Խաչատրյանն անցած տարին առանձնահատուկ համարեց ՊԿՊ-ների (պետական կարճաժամկետ պարտատոմսեր) շուկայի համար, նշելով, որ սկսեցին թողարկվել միջինաժամկետ 4 տարվա ժամկետով պարտատոմսեր: Նախարարի բնորոշմամբ, 2002 թ. նաեւ նախորդ տարիներին կուտակված պարտքերի մարման տարի էր: Եթե նախորդ տարվա ընթացքում պետության ներքին պարտքը 46 մլրդ դրամ էր, ապա այս տարվա համար մնացել է 12-14 մլրդ դրամի պարտք:

2003 թ.-ի կարեւոր խնդիրներից մեկը Վարդան Խաչատրյանը համարեց 26 մլրդ դրամ հարկային եկամուտների պլանավորված աճը, ինչի կատարման համար հարկ կլինի գումարներ բերել սվերային տնտեսությունից: Նշվեց, որ 2003 թ.-ի համար ծրագրվող աճը նկատի ունենալով, պետբյուջեում ավելացվել են սոցիալական ուղղվածության ծախսերը: Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարը վկայակոչելով դա, համաձայն չէր առկա այն համոզմանը, որ տնտեսական աճն էական ազդեցություն բնակչության հիմնական մասի վրա չի ունենում: Թերեւս, նախարարն իրավունք ունի սեփական կարծիքն արտահայտելու, բայց լավ կլինի, որ դա մոտ լինի իրականությանը:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԸՆԹԱՑԻԿ

Ռաֆֆի Հովհաննիսյանի դահանջը չբավարարվեց

Վճիռը կբողոքարկվի այսօր

Կենսրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը երեկ շարունակեց Ռաֆֆի Հովհաննիսյանի դիմումի քննությունը: Որպես դատախազող հանդես եկող Ռոբերտ Քոչարյանի լիազոր ներկայացուցիչը չընդունեց դիմող կողմի ներկայացրած դահանջը: Իսկ վերջինս վերաբերում էր նրան, որ անվավեր ճանաչվեր ՀՀ նախագահի անգործությունը եւ դարձավորեցվեր նրան Ռաֆֆի Հովհաննիսյանին քաղաքացիություն շնորհելու վերաբերյալ 2001 թ. օգոստոսի 10-ի հրամանագրում փոփոխություն կատարել՝ «քաղաքացիություն շնորհել» բառերից առաջ ավելացնելով «23.09.1991 թվականից» բառերը:

Պատասխանող կողմը չընդունեց այս դահանջը՝ դատճառաբանելով հետեւյալ կերպ: Նախ, ըստ դատասխանող կողմի, ՆԳՆ եւ ԱԳՆ արխիվների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ 1991-95 թթ. Ռաֆֆի Հովհաննիսյանի կողմից քաղաքացիություն շնորհելու դիմում չի ստացվել: Եվ եթե անգամ պրն Հովհաննիսյանը դատճառ կերպով դիմեր եւ որեւէ դատասխան չստանար, ապա իր իրավունքի խախտումը կարող էր բողոքարկել մեկամսյա ժամկետում:

Մինչեւ ՀՀ սահմանադրության ընդունումը, ըստ դատասխանող կողմի, որեւէ անգործություն Լեւոն Տեր-Պետրոսյանը չի ցուցաբերել: Հետսահմանադրական շրջանում օրենսդրությամբ սահմանված կարգով Ռաֆֆի Հովհաննիսյանն առաջին անգամ դիմում է ներկայացրել 1996 թ. սեպտեմբերի 19-ին:

Այս դիմումին ընթացք է տրվել: Ռաֆֆի Հովհաննիսյանին նույն թվականի օգոստոսին ծանուցագիր է ուղարկվել՝ առաջարկելով եռամսյա ժամկետում ներկայացնել ԱՄՆ քաղաքացիությունից դուրս գալու փաստաթուղթ: Այդպիսին չի ներկայացվել: Միայն 2001 թ. ապրիլի 23-ին է Ռաֆֆի Հովհաննիսյանը հրաժարվել ԱՄՆ քաղաքացիությունից, հյուպատոսին ուղղված դիմումում նշելով, որ հարկադրված է դուրս գալիս քաղաքացիությունից, որովհետեւ Հայաստանի օրենսդրությունը չի նախատեսում երկքաղաքացիություն:

Խոսելով նախագահի մասին որպես ինստիտուտ, դատասխանող կողմի լիազոր ներկայացուցիչ Արշաքես Կակոյանը համարեց, որ նախագահի գործողությունները համապատասխանել են գործող օրենսդրության դահանջներին եւ անգործություն որակվել չեն կարող: Ուստի պրն Կակոյանը դատարանից խնդրեց Ռաֆֆի Հովհաննիսյանի դահանջը մերժել՝ օրենքին հակասելու եւ հայցային վաղեմության ժամկետը բաց թողնելու դատճառով:

Այնուհետեւ դիմող կողմի հարցերից ու դատասխանող կողմի տված դատասխաններից պարզվեց, որ անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելու դեպքում նախագահը կարող է շնորհել կամ չշնորհել քաղաքացիություն: Բայց երբ անհրաժեշտ փաստաթղթեր չեն ներկայացվում, քաղաքացիություն շնորհելչշնորհելու հարց չի քննարկվում:

Հետո մի երկար ժամանակ կողմերը հարց ու դատասխանի նյութ դարձրին մի քանի հանգամանք: Նախ, իրավասո՞ւ էր արդյոք նախագահի աշխատակազմը զբաղվելու քաղաքացիության հարցերով: Կամ քաղաքացիության իրավունք ստանալն ինչպիսի՞ վեճ է իրավական առումով եւ այլն: Որոշ հարցեր էլ անցնում էին տեսական բնույթի եւ արժանանում դատավորի դիտողությանը: Ապա վիճարկելով այն, թե արդյոք 1991 թ. խախտվել է Ռաֆֆի Հովհաննիսյանի քաղաքացիություն ստանալու իրավունքը, կողմերը հասան այնտեղ, որ սկսեցին առանց նախագահողի վիճարկել այս կամ այն հարցի գործի հետ կապված լինելը:

Դատավարությունն այսպիսով ավարտվեց եւ մնաց միայն վճռահատությունը:

Իսկ ընդհանուր առմամբ, այդպես էլ չհասկացված մնաց 1991 թ.-ից քաղաքացիություն ստանալու դահանջը, երբ ԱՄՆ քաղաքացիությունից հրաժարվում են միայն 2001 թ.: Չհասկացվեց նաեւ, թե ի վերջո ո՞րն էր նախագահի անգործությունը կոնկրետ 1991 թ. սեպտեմբերի 23-ին տրված նամակ-դիմումի առնչությամբ, երբ այդ նամակը հանձնվել էր անմիջապես նախագահին՝ դատեհ օգտագործելով հարմար առիթն անձնական հանդիպման ժամանակ: Հարց է առաջանում՝ իսկ եթե, ասենք, Լ. Տեր-Պետրոսյանն ուզենար հենց այդ դահին ընդառաջել Ռ. Հովհաննիսյանին, իրավական հիմք կունենա՞ր նրան քաղաքացիություն շնորհելու: Կամ, հարցը դիտելով հակառակ կողմից, ի՞նչն էր խանգարում ՀՀ առաջին ԱԳ նախարարին այդ հարցն անընդհատ ՀՀ առաջին նախագահի առաջ բարձրացնելուն:

Նաեւ ինչպես հասկանալ 1991 թ.-ից քաղաքացիություն ստանալու դահանջը 1995, 96, 97... թթ. դիմումներում, երբ 91-95 թթ. միայն քանի մարդիկ չէ, որ դիմել են նախագահին դատճառ կարգով եւ նույն կերպ էլ մերժվել: Մինչդեռ պրն Հովհաննիսյանի նամակին կարծես թե չեն դատասխանել: Ստացվում է, որ արտգործնախարար նշանակելիս գնահատել են, իսկ քաղաքացիության հարցում՝ ոչ, կամ էլ նամակ իսկապես չի ստացվել:

Այսպես թե այնպես, Ռաֆֆի Հովհաննիսյանի դիմումի դահանջը դատարանը մերժեց՝ կայացնելով դիմումը չբավարարելու վճիռ: Դրանով, կարծում ենք, Ռ. Հովհաննիսյանը հասավ իր նպատակին՝ սեփական արհեստածին հարցը շահարկել երկար՝ իր անձը կարեւորելու եւ ուշադրության կենտրոնում մնալու համար:

Ինչպես տեղեկացանք Ռաֆֆի Հովհաննիսյանի թեկնածությունն առաջադրած նախաձեռնող խմբից, այսօր եւեթ կլինի առաջին ատյանի դատարանի վճռի բողոքարկում:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



1992-ին Վարդան Օսկանյանին եւս մերժվել է ՀՀ քաղաքացիությունը

«Մենք դեռ չունենք համապատասխան օրենք» պատճառաբանությամբ

ՀՀ առաջին արտգործնախարար Ռաֆֆի Հովհաննիսյանի՝ ՀՀ քաղաքացիություն ստանալու խնդիրը փետրվարյան նախագահական ընտրությունների համատեքստում վերջին օրերին ամենակտիվ քննարկումների նյութ է: Նկատի ունենալով ԱՄՆ քաղաքացիությունից հրաժարվելու եւ մեր նորանկախ հանրապետության հպատակություն խնդրելու հարցում նմանությունն արտգործնախարար Վարդան Օսկանյանի դեպքի հետ՝ դիմեցինք վերջինիս՝ պարզելու ՀՀ անձնագիր ստանալու ոդիսականը: Պրն Օսկանյանը պարզաբանեց, որ ինքը եւս ՀՀ քաղաքացիություն ստանալու համար առաջին անգամ դիմում է ներկայացրել 1992-ին՝ հանրապետության առաջին նախագահին: «Սակայն ստացել եմ բացասական դատասխան այն հիմնավորմամբ, որ հնարավոր չէ ՀՀ քաղաքացիություն շնորհել որեւէ մեկին քաղաքացիության մասին օրենքի բացակայության դատճառով»: Օրենքն ընդունվել է 1995-ին, եւ 1998-ի ապրիլին, կրկին դիմելով եւ ԱՄՆ քաղաքացիությունից դատշաղաղես հրաժարվելու փաստաթուղթը համապատասխան մարմնին ներկայացնելուց հետո, Վարդան Օսկանյանին շնորհվել է ՀՀ քաղաքացիություն:

Իսկ արդյոք երկրորդ դիմումի մեջ պրն Օսկանյանն արծարծե՞լ է Հայաստանում բնակվելու ժամանակից ի վեր քաղաքացիություն ստանալու հարցը: «Իմ դիմումում ես այդպիսի դահանջ չեմ ներկայացրել, սակայն դիմում գրելուց առաջ նման հարցադրում արել եմ համապատասխան մարմնին, թե արդյոք հնարավո՞ր է քաղաքացիություն ստանալ առաջին դիմումի օրվանից: Սակայն բացասական դատասխան եմ ստացել, որ հնարավոր չէ, քանի որ ՀՀ քաղաքացիության մասին օրենքը հետադարձ ուժ չունի, եւ այդպիսի քայլի դեպքում հակասություն կստեղծվի մեր օրենսդրության հետ»:

Լ. Գ.

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Արձագանքում է Լեհաստանում ապրող հայուհին

Մեր թերթի հունվարի 8-ի համարում տպագրված «Լեհերի համար հայի կերպարն այդքան էլ դրական չէ» հոդվածին է անդրադարձել վերջին երկու տարում Լեհաստանում օրինաբար ապրող, Լեհաստանի գիտությունների ակադեմիայում իր դոկտորական թեզի վրա աշխատող ուսանողուհի Քրիստինե Բարսեղյանը, որը մի քանի ճշգրտումներ է արել հոդվածում բերված տեղեկությունների առնչությամբ: Ստորեւ թարգմանաբար ներկայացնում ենք նամակի բովանդակությունը:

Այս կարճ նամակով ցանկանում եմ տեղեկացնել, որ ապօրինի ապրող եւ հանցագործ հայ խմբավորումների մասին հոդվածում ստեղծված պատկերով ծիծաղ չէ բնորոշել Լեհաստանում ապրող բոլոր հայերին: Եթե դա մասամբ ճիշտ է Վարշավայի համար, որտեղ այսպես կոչված «ռուսական շուկայում» հայերն իրականացնում են իրենց անօրեն գործունեությունը, ապա ամբողջովին անարդար է, օրինակ, Կրակովի հայերի համար, որոնք քաղաքի ամենահարգված փոքրամասնություններից են: Դա անարդար է նաեւ Լեհաստանում սովորող ինձ նման ուսանողների համար, որոնք լեհական ակադեմիական շրջանակներում աշխատում են բոլորովին այլ դրական պատկեր ստեղծել հայերի մասին: Իմ հիշողության մեջ թարմ են լեհերի մեծամասնության շնորհավորանքները իմ հասցեին Հովհաննես Պողոս Բ-ի Հայաստան այցելության օրերին:

Այնուամենայնիվ, պետք է խոստովանել, որ հայերի հանդեպ լեհերի հարգանքն ընդհանուր առմամբ նվազել է: Գերադասում եմ խոսել Հայաստանի կառավարության ներկայացուցչության նկատմամբ իմ անձնական վերաբերմունքի մասին: Հայ համայնքի բազմաթիվ նամակ-խնդրագրերից հետո, երբ Սբ. էջմիածնից մի քահանա եկավ Լեհաստան, Հայաստանի դեսպանատնից ոչ ոք չեկավ նրան դիմավորելու: Չորս այլ խանդավառ երիտասարդների հետ ես էլ էի գնացել հանդիպմանը: Իհարկե, եթե հարցնեիք, դեսպանատան ներկայացուցիչները կդատասխանեին, որ չափազանց ծանրաբեռնված են դիվանագիտական աշխատանքներով: Բայց լեհական մամուլի աշխատողները լսել են նրանց միայն առեւտրական գործունեության մասին: Ես նույնպես: Միգուցե այսքանը բավական է ամբողջացնելու համար Լեհաստանում ապրող հայերի մասին ձեր թերթում տպագրված դատմությունը:

Երբ արժանապատվությունը դառնում է խաղաթուղթ

Սկիզբը էջ 1

Սակայն զուտ մարդկային, բարոյական առումով հազիվ թե բոլոր ընդդիմադիրներն էլ ընդգծված լռություն դահանջեին, էլ չենք խոսում զուտ մարտավարության իմաստով դրա անհնարինության մասին: Եվ եթե իրոք այդպես է եղել, ապա լրագրողական դաշտը պարզապես տուրք է տվել քաղաքական շահարկումներ բացելու թերեւս չգիտակցված գայթակղությանը:

Այնուհետեւ Պետրոս Մակեյանն իր նախագահի թեկնածությունից հրաժարվելն ուղղակի կապեց Տիգրան Նաղդալյանի սպանության եւ իբր իշխանության կողմից հանիրավի դիտակավորումներից խուսափելու հետ, ինչն առանց մեկնաբանությունների ներկայացվեց լրատվամիջոցների կողմից: Նախ՝ առնվազն անբարոյականություն է մարդու սպանությունը սեփական մարտավարական քաղաքական ծրագրերին ծառայեցնելը, առավել եւս՝ որպես դատրվակ մատնանշելը: Ոչ մեկի համար էլ գաղտնիք չէ, որ Մակեյանը երբեք նախագահ դառնալ չէր կարող եւ ընտրադայքարից դուրս գալու, այսինքն՝ սեփական ձեռքերով սարքած ցեխից դուրս գալու համար դարձապես ընտրեց հարմար առիթը շաս կոդիս, անհաջող դատճառաբանությամբ:

Սակայն ընդդիմադիր շրջանակների կողմից ձեռնարկվեց հաջորդ, թերեւս սպասելի քայլը: Տիգրան Նաղդալյանի սպանությունն այժմ փորձում են հետեւողականորեն կապել հոկտեմբերի 27-ի ոճրագործության հետ: Այն նույն եղանակով, ինչպես դա տեղի ունեցավ 2000 թ. սկսած գործող նախագահի դեմքում: Սկզբում շրջանառության դրվեց Տ. Նաղդալյանի եւ հայտնի մոնտաժված տեսաերիզի միջեւ իբր աներկբա կապը, ապա ակնարկներ հնչեցին, թե ում էր դետք այդ գործից «շաս բան իմացող» հանրային հեռուստատեսության գործադիր տնօրենի սպանությունը: Սա փաստորեն երկրորդ վարկածն էր, որի նպատակն առաջինին հակակշռելն էր եւ «Բրուտոսի» սինդրոմի արմատավորումը: Հետաքրքրականն այն է, որ այդ վարկածների շուրջ հիմնականում ոչ թե քաղաքական ուժերն են դատողություններ անում, այլ հատկապես ընդդիմադիր մամուլը, այդպիսով ոչ միայն փոխադարձ շահարկումների կաթսան կոելով, այլեւ իրենց նետելով նույն կաթսայի մեջ:

Այսօր արդեն կարելի է խոսել հստակորեն արտահայտվող իշխանական եւ ընդդիմության՝ սպանության շուրջ ստեղծված փոխադարձ մեղադրանքների հիման վրա կառուցված երկու հեգեմոն վարկածների շուրջ: Որքանով են դրանք իրատեսական, բացառապես իրավապահների գործն է:

Հասարակությունը՝ այդ թվում եւ քաղաքական ակադեմիական շրջանակները, ե՛ւ մամուլի միջոցներն արդեն առաջ են քաշել իրենց վարկածները: Դա նորմալ երեւույթ է եւ ըստ էության միայն այդ դեպքում է հնարավոր հանցագործության բացահայտմանը հանրության անհրաժեշտ օժանդակությունը: Սակայն հանրության գործը չէ այն բացահայտելու սեփական միջոցները հնարել՝ դրանով իսկ ավելի վնասելով գործին: Իսկ այս դահին լրատվամիջոցներն ավելին չեն անում, քան գործի բացահայտմանը խոչընդոտելը:

Մինչդեռ, ըստ էության, հենց լրատվամիջոցները դետք է ամենաարագագույն կողմը լինեին գործի անկողմնակալ, թափանցիկ բացահայտման համար: Հանցագործությունը որքան քաղաքական բովանդակություն ունի, այնուամենայնիվ, ուղղակի լրագրողին լոեցնել էր նշանակում, իսկ գլոբալ իմաստով նաեւ միտված էր ողջ լրատվական դաշտի ահաբեկմանը: Մեկ տարվա մեջ արդեն երկրորդ դեպքն է տեղի ունենում լրագրողին ահաբեկչության ենթարկելու (նախորդը Մարկ Գրիգորյանի դեմ մահափորձն էր) եւ դրան չի կարելի թեթեւամիտ մոտենալ: Արդեն իսկ ակնհայտ է, որ ինչ-ինչ ուժեր, անկախ նրանց քաղաքական կողմնորոշումներից, մեծամասշտաբ հարձակում են սկսել ազատ մամուլի եւ լրագրողների դեմ, եւ դրա առաջն առնելու միակ ճանապարհը նույն այդ ուժերի գործիքը չդառնալն է, այսինքն՝ ամեն կերպ հարցի շահարկումից խուսափելը:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ժԱ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ

Երեւան 375010, Հանրապետության 47
Թող: 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱԼԵՔՍԻՔԵԱՆ / հեռ. 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221

Տնօրէն
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ / հեռ. 529353

Համակարգ. ծառայութիւն
/ հեռ. 582483

Շուրջօրյա լրահավաք ծառայութիւն
/ հեռ. 529353

Apple Macintosh
համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են, համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:

Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում

«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

ԼԱԲԱՑԻԿ

ԱՄՓՈՓՈՒՄ

2002-ը որակական փոփոխությունների տարի էր

Ասում է Շիրակի մարզպետ Ֆելիքս Փիրումյանը

Անցած 2002 թվականին Շիրակի մարզում շահագործման է հանձնվել 1045 բնակարան, որից 1024-ը Գյումրիում: Երկրաշարժից անօթևան 1200 գյումրեցի ընտանիքներ էլ տնատեր են դարձել բնակարանների գնման վկայագրերի (ԲԳՎ-ների) միջոցով: Տարվա ընթացքում ընդհանուր առմամբ տրամադրվել է 1700 ԲԳՎ Գյումրիում, 300-ը Ախուրյանում: Մարզում շարք են մտել երկու տասնյակից ավելի դպրոցական շենքեր, նույնքան բուժօբյեկտներ, այդ թվում 8-ը խոշոր: Այսպիսի տվյալներ հրապարակվեցին տարեվերջին Շիրակի մարզպետ Ֆելիքս Փիրումյանի հրավիրած ամփոփիչ մամուլի ասուլիսում, որտեղ պրն Փիրումյանը գնահատեց 2002 թվականի տեղն ու դերը աղետի գոտու վերականգնման գործում:

Մարզպետի գնահատմամբ՝ վերջին տարիների ճանապարհային փոփոխություններն այստեղ պետք է հանգեցնեին որակական արդյունքի, ինչը հաջողվեց անցած տարում: Պետությունը կարողացավ մարդկանց վստահություն ներշնչել, վերջնականորեն ձեւավորել այն կարծիքը, որ աղետի գոտին իրոք վերականգնվում է: Խոսքը վերաբերում է ոչ միայն շահագործման հանձնված բնակարաններին ու մյուս շինօբյեկտներին, այլեւ ընդհանրապես ձեռնարկված աշխատանքների մեծ ծավալին եւ լուծված հարցերի շրջանակին: 2002-ին սկսվել եւ այս տարի կշարունակվի եւս շուրջ 2500 բնակարանների կառուցումը, որից բացի անօթեւան 3000 ընտանիքների էլ կտրամադրվեն բնակարանների գնման վկայագրեր: Պրն Փիրումյանը լավատես է նույնիսկ արդյունաբերության հարցում, որը մնում է հասկանալի Գյումրու ամենաթույլ տեղը: Ըստ բերված նախնական տվյալների, անցյալ տարի մարզի արդյունաբերությունը 60 տոկոս աճ է ապահովել, որը 2-2,5 անգամ գերազանցում է հանրապետության համապատասխան ցուցանիշը: Մարզպետի հավաստմամբ, 2002-ին ստեղծվել են այն հիմքերը, որոնցով մարզի մի շարք ձեռնարկությունների հանդեպ այսօր լուրջ հետաքրքրություն են սկսել ցուցաբերել տարբեր տեղերի գործարարներ: Հաջողություններ են արձանագրվել գյուղատնտեսության ոլորտում. եթե 2-3 տարի առաջ մարզում մշակվում էր ընդամենը 40-45 հազար հեկտար հողատարածություն, ապա անցած տարի այդ թիվը հասցվել է 55 հազարի: Դրական տեղաշարժեր կան գազիֆիկացման (ավելացել է 2500 բաժանորդ), մշակութային օբյեկտների վերականգնման եւ այլ ոլորտներում:

Ըստ մարզպետ Փիրումյանի հաղորդած տվյալների՝ անցած տարում մարզում ստեղծվել է 4693 աշխատատեղ, որից 1611-ը՝ ժամանակավոր:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

Հայաստանում ծնվեց 115-րդ կուսակցությունը

Որն իրեն անվանում է կենտրոնաձիգ ապակենտրոն

«Հանրապետությունում Հայ իրավունքը շարունակում է մնալ խաթարված վիճակում, ազգանպաստ գործունեությունը հանդիպում է թե օրինական, թե ապօրինի խոչընդոտների»: Ի՞նչ է նշանակում «Հայ իրավունք» արտահայտությունը: Սա թերեւս պիտի դարձել նորաստեղծ «Ազգային ֆրիստոնեական միություն» կուսակցությունից, որն իր հիմնադիր ժողովում հայտարարել է այդ մասին: Հունվարի 6-ին գումարած այդ ժողովում կուսակցությունը որոշել է նաեւ, որ չնայած երկրում շարունակվում են ազգանպաստ գործունեության օրինական խոչընդոտները, այնուամենայնիվ, «Հայ իրավունքի» ամենահարմար պաշտպանը Ռոբերտ Քոչարյանն է:

Այնպես որ, փետրվարի նախագահական ընտրություններին հերթական նորաթուխ կազմավորումը, որն իրեն կուսակցություն է անվանում, պաշտպանելու է գործող նախագահի թեկնածությունը: Այս որոշումը կայացնելուց հետո, ինչպես տեղեկանում ենք ստացված մամլո հաղորդագրությունից, հիմնադիր ժողովն ընդհատել է իր աշխատանքները՝ մնացյալ հարցերի քննարկումը հետաձգելով անորոշ ժամանակով: Կուսակցությունն, այնուամենայնիվ, հաստատել է պարզել նաեւ, որ ինքը «գաղափարական կենտրոնաձիգ կազմակերպություն է, որը գործում է ապակենտրոն սկզբունքներով»:

Լ. Գ.

ԱՌԵՎՏՈՒՐ

Անպատշաճություն՝ անորակությունից, ձնհալից, երեկոներից եւ ընդհանրապես

Տոնավաճառներում ապրանք ընտրելուց ավելի ծանծրալի բան չկա: Ժամանակի անտեղի կորուստ, վաճառողների անբարեհամբույր դեմքեր, հարցերիդ դժկամ պատասխաններ: Ապրանքատեսակների պակասից չես դժգոհի, իսկ որակի մասին հարցնելիս միայն անորոշ պատասխան կստանաս, կամ թե իբր դժգոհություններ, բողոքներ չեն եղել: Առեւտրի գրեթե բոլոր կետերում կարելի է կարդալ, թե վաճառված ապրանքը հետ չեն վերցնում: Շատերի հետ պատահած կլինի. տեղում փորձում ես որեւէ ապրանք, ու մեկ-երկու օր գործածելուց հետո փչանում է, իսկ գնածդ ապրանքը հետ չեն վերցնում: Սպառողն անպաշտպան է, որեւէ իրավունքից զուրկ: Օրեր առաջ «Ռոսիա» կինոթատրոնի տոնավաճառից գնած կոշիկը խանութից դուրս գալուն պես փչացավ: Վերադարձնում ես գոնե փոխելու ակնկալիքով: Որակին՝ ուզած-չուզած կասկածում ես: Հարցնում ես (փողոցի ջրերից ակնհայտորեն «վախեցած»), թե արդյոք ջուր չի՞ ներծծում: Իսկ վաճառողուհին ոչ ավել, ոչ պակաս հարձակվում է վրադ խիստ անառարկելի ու բարձր տոնով, թե մենք զարմանալի ժողովուրդ ենք, որ անպայման ուզում ենք ջրերի միջով քայլել, կարելի է, չէ՞, շրջանցել փողոցների «համատարած» ջուրը: Մեղավոր ես զգում, որ անորակ ապրանք ես գնել, որ փողոցները ջրառատ են, որ դրամ չունես վատնելու: Իրենք իրենց առաջարկներն ունեն, ճանապարհին բազմաթիվ արհեստանոցներ կան, իրենք պատրաստակամ են այս հարցում, թեզ կուղեկցեն, կգտնեն մի անորակ արհեստավորի, որ կսպասեցնի մի կես ժամ, դրամը կվերցնի, իսկ արդյունքում նույնը:

Երիտասարդ վաճառողը բարեկիրթ էր եւ մատուցեց լրացուցիչ այս ծառայությունը, չմոռացավ ներողություն խնդրել եւ՝ անկեղծորեն: Ինքը որպես սպառող բազմիցս խաբվել է: Եվ եթե ես՝ այս մեկ ապրանքի մեջ, ապա իրենք՝ բազմիցս: Նույնիսկ կահույք է գնել եւ 1-2 օր հետո հրավիրել վարպետների՝ նորոգելու: Իսկ առհասարակ առեւտուր անողները բոլորն էլ տրտնջում են տեղի բարձր գներից (այս դեպքում՝ օրական 1700 դրամ), հարկային քաղաքականությունից եւ այլ անարդարություններից, իրենք էլ են անպատշաճ (մանր ու միջին գողություններ), զանազան կորուստներ: Եվ հազիվհազ ընտանիքի գոյությունն են պահում:

Ոչինչ չի մնում անել. ապրանքը հետ չեն վերցնում, չեն փոխում, կամ պիտի դեն նետես (որովհետեւ վաճառողն ինքը դա չի ուզում անել), կամ պիտի դեռ չգործածած նորոգես:

Մ. Ք.

ՀԱԿԻՐՃ

Ի՞նչ ենք տալու միջուկային վառելիքի դիմաց

Անդրադառնալով հայկական ԱԷԿ-ի համար նոր միջուկային վառելիք ձեռք բերելու եւ նախկին վառելիքի դիմաց շուրջ 30 մլն դոլար կազմող պարտքի հարցին, Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Վարդան Խաչատրյանը հայտնեց, որ այս առնչությամբ պայմանագիրը պատրաստ է: Սակայն չի ստորագրվում, որովհետեւ քննարկվում են պարտքի վճարման այլ տարբերակներ, մասնավորապես էներգետիկ համակարգի շրջանակներում: Նախարարը նշեց, որ առկա է կոնկրետ, առավել հավանական տարբերակը, բայց հրաժարվեց հայտնել, թե որն է դա:

Աղքատության նպաստի երեխաների հավելավճարը փոքր-ինչ կավելանա

Աղքատության ընտանեկան նպաստի ծրագիրը 2003 թ. կշարունակվի: Այդ նպաստակով հատկացված միջոցները նախորդ տարվա համեմատ ավելացել են մոտ 500 մլն դրամով եւ կազմել 12 մլրդ 750 մլն դրամ: Այդ մասին ասելով, սոցիալական ապահովության նախարար Ռազմիկ Մարտիրոսյանը երեկ հայտնեց, որ եկող տարվա երկրորդ կեսից, համաձայն կառավարության ընդունած որոշման, ավելանալու է երեխաների համար տրվող հավելավճարի չափը՝ 1500 դրամի փոխարեն 2000 դրամ: Այլ էական փոփոխություններ չկան: Նպաստի բազային չափը, մեկանգամյա վճարի չափը մնացել է նույնը՝ 4000 դրամ: Անցյալ տարի այս ծրագրից օգտվել է 150 հազար ընտանիք: Այս տարի այս թիվն անփոփոխ կմնա: Սոցապնախարարը կարեւորեց նպաստների հասցեականության ճշտումը, որը, նրա հավաստմամբ, այժմ 90 տոկոսից ավելի է, բայց դեռ աշխատելու շատ տեղ կա: Ռազմիկ Մարտիրոսյանը նշեց նաեւ, որ անցյալ տարվա տնտեսական աճը, այլ երկրներից դրամական փոխանցումների աճը 30 տոկոսով, 30–35 հազար աշխատատեղերի ստեղծումը որոշակի ազդեցություն են գործել աղքատության ցուցանիշի վրա:

Որքա՞ն գումար է բերվել ստվերից

Այսօր անցած 2000 թ. ամփոփող մամուլի ասուլիս է հրավիրելու պետական եկամուտների նախարար Երվանդ Զախարյանը: Բնականաբար, նախարարը կմանրամասնի հարկային մուտքերի տվյալները, որոնք երեկ ընդհանուր տնտեսական ցուցանիշների հետ արդեն հրապարակել է Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարը: Հիմնականն այստեղ պլանավորված ցուցանիշների գերակատարման փաստն է մի քանի հարյուր միլիոն դրամով: Այստեղ որոշակի հետաքրքրություն է առաջացնում այն հարցը, թե շուրջ 105 մլրդ դրամի հարկային մուտքերից որքա՞նն է կազմում ստվերից բերված գումարը: Հիշեցնենք, որ ինչպես 2002 թ. առաջին 6 ամիսը, այնպես էլ 9 ամիսն ամփոփելիս Երվանդ Զախարյանը մատնանշեց ստվերային տնտեսությունից բերված գումարի նույն չափը՝ 6–7 մլրդ դրամ: Ամե՞լ է արդյոք այդ թիվը տարվա վերջին 3 ամիսներին:

Ա. Ա.

Ղպրոցներում վթարները վերացվում են

Երեւանի քաղաքապետարանի կրթության վարչությունից տեղեկացանք, որ այս տարվա խստաշունչ ցրտի հետեւանքով մայրաքաղաքի 116 դպրոցներում արձանագրվել է կոյուղագծերի, ներքին ջրագծերի եւ մուտքագծերի 116 վթար: Քաղաքի 76 դպրոցներում վերացվել են վթարները, իսկ մնացած 40 դպրոցներում ակտիվ աշխատանքներ են տարվում: Կրթության վարչության պետ Օնիկ Վաթյանը հայտնեց, որ մարզերից առաջարկներ կան գարնանային արձակուրդների հաշվին մեկ շաբաթով ուշ սկսել դասերը:

«Մենք ձեռնպահ ենք մնում այդ առաջարկության նկատմամբ: Մայրաքաղաքում հայտարարված ամսաթվին՝ հունվարի 13-ին պատրաստ կլինենք սկսել դասերը, իսկ եթե մինչ այդ մարզերում չհաջողեն իրականացնել վթարների նորոգման աշխատանքները, Երեւանում եւ շրջաններում դպրոցները կբացեն իրենց դռները նշված օրից մեկ շաբաթ ուշ»:

Հունվարի 11-ին շաբաթօրյակ՝ մայրաքաղաքը մաքրելու ձնից եւ աղբից

Մայրաքաղաքում վերջին շրջանում առաջ տեղումների՝ ձյան, «Լինսի» հիմնադրամի միջոցներով կառուցված փողոցների շինարարական հետքերը, կոյուղագծերի, ջրագծերի, աղբատարների սառած հետքերը քաղաքի տարբեր մասերում ստեղծել են հակասանիտարական վիճակ: Եվ մայրաքաղաքը ոչ թե ամենօրյա մաքրելու կարիք է զգում, այլ՝ շաբաթօրյակի:

Թերեւս այդ է պատճառը, որ Երեւանի քաղաքապետարանն առաջիկա շաբաթ օրը՝ հունվարի 11-ին, ժամը 10-ից հայտարարում է համաքաղաքային շաբաթօրյակ: Որը կիրականացվի համայնքային եւ քաղաքային «սան մաքրում» ձեռնարկությունների ուժերով, նաեւ այն կամավորների ջանքերով (կազմակերպությունների, գերատեսչությունների, անհատների), ովքեր ցանկանում են մաքուր ու գեղեցիկ տեսնել Երեւանը:

Ձյան մաքրման աշխատանքներին կմասնակցեն «Ավտոտրանսպորտ» ձեռնարկությունը, «Լինս» ՀԿԳ-ը, շինարարներ: Թենիսի «Արարատ» ակումբն աշխատանքներ կիրականացնի Օղակաձեւ զբոսայգում, «Ջերմային տնտեսություն» ՊՓԲԸ-ն՝ Զաֆյան-Ամիրյան հատվածում:

Երեւանը հիմնովին մաքրելուց հետո, բոլոր երեւանցիներին հունվարի 12-ին, ժ. 20-ին քաղաքապետարանը հրավիրում է Հանրապետության հրապարակ, ուր միասին կտոնենք «Հին նոր տարին»: Կհնչի երաժշտություն, կլինի հրավառություն, մեր հովանավորները երեւանցիներին կմատուցեն բազում անակնկալներ:

Արցախում այս տարի անկախ մամուլը ֆինանսավորում կստանա պետությունից

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 9 ՀՈՒՆՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Արցախում այս տարի առաջին անգամ պետական ֆինանսավորում կստանան նաեւ կուսակցական, անկախ, գրական-մշակութային մի շարք թերթեր: Ինչպես հայտնեց ԼՂՀ ԱԺ արտաքին հարաբերությունների եւ լրատվության մշտական հանձնաժողովի նախագահ Վահրամ Աբրահամյանը, անկախ մամուլին ընդհանուր առմամբ նախատեսվում է տրամադրել 1,5 մլն դրամ (մոտ 2,5 հազար ԱՄՆ դոլար): Նախորդ տարիներին ԼՂՀ-ում պետության կողմից ֆինանսավորվում էին միայն պետական հեռուստառադիոն, խորհրդարանի եւ կառավարության պաշտոնաթերթ «Ազատ Արցախ»-ը, Արցախի գրողների միության պարբերականները եւ 5 շրջանային թերթեր:

Ի ԼՈՒՐ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ

Մամուլի ազգային ակումբը շարունակում է հանդիպումների շարքը ՀՀ նախագահի թեկնածուների հետ:

«Հրատապ թեմա» ծրագրի շրջանակներում շարքի չորրորդ հանդիպումը կկայանա «Հանրապետություն» կուսակցության քաղաքական խորհրդի անդամ ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆԻ հետ ուրբաթ՝ հունվարի 10-ին, ժամը 12:00-ին ՍԱՍ-ում:

ՄԱՍՈՒԼԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ

Տարածաշրջան

Երկար ատենէ ի վեր եւրոպական պետութիւնները աղաւինած էին Յունաստանի վետոյի իրաւունքին՝ հեռու պահելու համար Թուրքիան Եւրոպական Միութենէն, սակայն այսօր այդ վետոն այլեւս ազդակ մը չէ ու դադրած է ծառայելէ իբրեւ բուգի տերեւ, որուն ետեւ եւրոպական պետութեանց ղեկավարները կարենային թաքցնել իրենց իրական զգացումները Թուրքիոյ անդամակցութեան մասին եւ այս՝ անոր համար, որ Յունաստան միշտ յեղեղուկ քաղաքականութիւն մը վարած էր Թուրքիոյ նկատմամբ՝ մէյ մը առիւծ կտրելով եգէական ջուրերուն վրայ եւ ապա՝ ընկրկելով թրքական զինուորական սպառնալիքին դիմաց: Այսօր Յունաստան առարկութիւն չունի Թուրքիոյ անդամակցութեան դէմ, վստահաբար ամերիկեան ճնշումի հետեւանքով:

Ուրեմն, եւրոպական միւս պետութիւններուն կը մնայ հրաժարակ իջնել եւ ընդդիմանալ Թուրքիոյ անդամակցութեան:

Դեկտեմբեր 12-ը Թուրքիոյ համար ճակատագրական թուական մը դարձաւ, որովհետեւ եւրոպական Միութեան անդամները հաւաքուեցան Կոպենհագէնի մէջ քննելու համար անդամակցութեան դիմում ներկայացնող երկիրներուն առաջարկները: Ի մեծ յուսախաբութիւն Թուրքիոյ եւ մասնաւորաբար նախագահ Բուշին, որ ոգի ի բռին պաշտպանեց Թուրքիոյ թեկնածութիւնը, եւրոպական Միութիւնը մերժեց թուական մը ծրդել Թուրքիոյ հետ բանակցութեան սկսելու: Սակայն, ինչ որ շահեկան է՝ մինչեւ այդ թուականը ծաւալած քաղաքական գործունէութիւնն է զանազան շրջանակներէն ներս, ապահովելու համար Թուրքիոյ ընդունելիութիւնը եւ բանակցութեանց թուականի մը ծրդումը. այդ բանակցութիւնները կրնան ամբողջ տասնամեակ մը տեւել, մինչեւ որ երկիր մը ապացուցանէ, թէ ապահոված է եւրոպական երկիր մը նկատուելու մակարդակը: Թուրքիոյ նման 80 միլիոնոց սնանկ երկրի մը համար, որ տակաւին միջնադարեան բարքերով կ՚ապրի, հաւանաբար այդ սպասումը աւելի երկար տեւէ:

Ուրեմն, ընդդիմութեան առաջին ռումբը արձակուեցաւ Ֆրանսայի նախկին նախագահ ժիսքար Դէսթէնի կողմէ, որ ներկայիս կը գլխաւորէ օրէնսգէտներու այն յանձնաժողովը, որ պատրաստելու վրայ է եւրոպական Միութեան ապագայ սահմանադրութիւնը: Արդարեւ, ան, նոյեմբեր 2-ին, ֆրանսական «Լը Մոնդ» ազդեցիկ թերթին տուած հարցազրոյցի մը ընթացքին համարձակօրէն յայտարարեց, թէ Թուրքիան եւրոպական երկիր մը չէ եւ չի կրնար մաս կազմել եւրոպական Միութեան, որովհետեւ, ըստեղ ան, Թուրքիոյ մասնակցութիւնը պիտի նշանակէր «եւրոպայի վախճանը»: Նախկին նախագահը աւելի առաջ երթալով աւելցուց, թէ բոլոր այն քաղաքական դէմքերը, որոնք կը հետաքրքրեն Թուրքիոյ անդամակցութիւնը, «բշնամիներն են եւրոպական Միութեան»:

Ուրիշ ֆրանսացի ծերակուտական (սենատոր) մը՝ ժան Կլոդ Գոդէն, որ միեւնոյն ատեն քաղաքագէտ է Մարսէյի, նոյեմբեր 12-ին «Ֆրանս ԷՖօ» հեռատեսիլի կայանէն ելոյթ մը ունենալով պաշտպանեց նախագահ Դէսթէնի տեսակէտը, աւելցնելով, որ «Թուրքիան չի կրնար եւրոպական Միութեան անդամակցիլ առանց ընդունելու Հայկական ցեղասպանութիւնը»: Եւրոպայի խորհրդարանը 1987-ին կ՚որոշէր, ի միջի այլոց, որ Հայկական ցեղասպանութեան ճանաչումը անհրաժեշտ պայմաններէն մէկն էր Թուրքիոյ համար անդամակցելու Եւրոպական Միութեան, սակայն վերջին տարիներուն սկսած է այդ պայմանը «շրջանցուիլ» շատերու կողմէ:

Թուրքիոյ անդամակցութիւնը Եւրոպական Միութեան ունի իր շրջանային ու համաշխարհային անդրադարձները, որովհետեւ Թուրքիա նախ պէտք է կարգի բերէ իր սեփական տունը, ուր բանտային տանջանքները, մամլոյ եւ միտքի ազատութեան ոտնակոխումները, 20 միլիոն քիւրդերու դէմ ջարդերը եւ անոնց ինքնորոշման իրաւունքի բռնաբարումները սովորական երեւոյթներ են տակաւին:

Ի վերջոյ, Եւրոպական Միութիւնը քաղաքական կառոյց մըն է, որուն կրնան մասնակցիլ դարերով ժողովրդավարական փորձ ու պատմութիւն ունեցող երկիրները եւ ոչ թէ Թուրքիոյ նման երկիր մը, որուն համար ժողովրդավարութիւնը կը մնայ ապագայի անորոշ խոստում մը՝ գործադրութեան քաղաքական հաւանականութեամբը մութին մէջ գործող զինուորական բռնատիրութեան:

Անցեալ օգոստոսի սկիզբը Թուրքիոյ խորհրդարանը կարգ մը փոփոխութիւններ մտցուց իր սահմանադրութեան մէջ. լաւագոյն պարագային՝ քանի մը երկչոտ քայլեր: Այդ փոփոխութիւններով վերջ կը դրուէր մահապատիժի գործադրութեան, զոր շրջանցելու համար Թուրքիա արդէն գտած է եւ երկար ատենէ ի վեր կը կիրարկէ մահուան ջոկատներու գործարքները՝ սպանելու կամ անյայտացնելու համար տարախոհները, ազատ մտածողութեան տէր լրագրողներն ու պետական դէմքերը: Սուսուլուքի գայթակղութեան առիթով արդէն բացայայտուեցաւ, թէ ինչպէս կը գործակցին պետական գործակալութիւնները մաֆիաներու եւ ոճրագործներու հետ, «մաքրելու համար» իրենց քաղաքական հաշիւները, որոնք կարելի պիտի չըլլար իրականացնել օրինական ճանապարհով:

Մահապատիժի վերացման հետ նոր սահմանադրութիւնը կը խոստանար մեղմել սեղմումները փոքրամասնութեանց նկատմամբ, արտօնել քրտերէնի գործածութիւնը լրատուամիջոցներուն եւ այլն:

Սակայն, գործնականին մէջ ոչ մէկ բան փոխուած էր, օրինակ, Թուրքիոյ հայ համայնքը սկզբնական որոշ ոգեւորութենէ մը վերջ, փորձով անդրադարձաւ, թէ տակաւին ոչ մէկ յոյս կար իրմէ բռնագրաւուած կալուածներուն տիրանալու: Հայ համայնքը յանձնախումբեր կազմեց, պատուիրակութիւններ ղրկեց Անկարա՝ հասկնալու համար, թէ հարիւրաւելի գրաւեալ կալուածները կարելի չէ վերստանալ, իսկ ապագայի համար ալ համայնքային հաստատութիւնները պիտի իյնան դռնէ դուռ, պիտի ապահովեն ներքին եւ արտաքին գործոց նախարարութեանց հաւանութիւնն ու նախարարաց խորհուրդին վաւերացումը... ապացուցանելու համար, որ «պէտք ունին» այդ կալուածին կամ կտակին եւ ապա տիրանան տուելիք ժառանգին:

Թրքական դիւանակալութեան (bureaucracy) ծանօթ որեւէ անձի համար յստակ է, թէ ինչ կը նշանակէ նման «արտօնութիւն» մը թրքական սահմանադրութեան մէջ:

Այս նոր փոփոխութեանց քննարկումին առիթով թրքական մամուլը հրապարակ հանեց եւ ուղղակի հեգնեց, թէ ինչ միջոցներով պետութիւնը «օրինականացուցած» էր այդ բռնագրաւումները, այդ միջոցները որքան զաւեշտական, նոյնքան նաեւ ողբերգական են ինքզինքի յարգող պետութեան մը համար, որ ժողովրդավարութենէ կը ծառէ:

Այսպէս, դասական իշխանութիւնները հրահանգ տուած են թրքական ոստիկանութեան, որ գտնեն տէրը հայոց կալուածներուն, եւ քանի որ այդ կալուածները արձանագրուած են Սուրբ Մարիամ Աստուածածնի կամ Գաբրիէլ հրեշտակապետի անունով՝ թուրք ոստիկանութիւնը գործի լծուած է... գտնելո՞ւ համար այդ «կալուածատէրը», եւ երկար փնտռտուքներէ ետք, խղճի մսօք, տեղեկացուցած է դասական իշխանութեանց, որ կարելի չէ եղած գտնել այդ կալուածատէրը, որովհետեւ իրենց տեսակ հասցէ կամ ժառանգորդ չեն թողուցած, ուրեմն, դասական իշխանութիւնները, այս «լուրջ» տեղեկագրին հիման վրայ որոշած են կիրարկել «երկրին օրէնքը», որ կը տնօրինէ թէ անտէր եւ անժառանգորդ կալուածները կը փոխանցուին պետութեան:

Բնականաբար, ոստիկանութիւնը իր այդ առաքելութեան մէջ երբեք չէ խորհած մօտենալու հայ գաղութին, անկէ իմանալու համար հասցէները... Մարիամ Աստուածածնին կամ Գաբրիէլ հրեշտակապետին...

Այսպէս՝ թրքական օրէնքի լրջութեան մասին:

Իսկ ինչ կը վերաբերի քրդական հարցերուն, թուրք պետութիւնը այնտեղ եւս կատարած է կարգ մը մակերեսային փոփոխութիւններ. օրինակ, զինուորականութիւնը վերացուցած է արտակարգ իրաւիճակի դրութիւնը քրդաբնակ երկու նահանգներէն, ջարդելէ ետք 30.000 զատութիւնը, որովհետեւ պետութիւնը պիտի օգտագործէ այս կեղծ արտօնութիւնը իր պետական պրոպագանդը տանելու քրդերէնով եւ քիւրդերուն հարազատ լեզուով պնդելու, թէ Թուրքիոյ մէջ քիւրդ կոչուած փոքրամասնութիւն գոյութիւն չունի, այլ միայն կան «լեռնական թուրքեր»:

Երբ էջեւիթի ծախակողմեան կառավարութիւնը կը փորձէր երեւութական քանի մը փոփոխութիւններ մտցնել երկրին մէջ եւրոպացիները խաբելու, յանկարծ քաղաքական հրապարակը կերպարանափոխուեցաւ եւ խորհրդարանական աթոռներու մեծամասնութիւնը անցաւ Ռեջեպ Թայիբ Էրդողանի «Արդարութիւն եւ բարգաւաճում» կոչուող կուսակցութեան ձեռքը: Էրդողանի կուսակցութիւնը ունի կրօնական ծագում, սակայն հանդէս կու գայ չափաւորական դիմակով մը, իրականին մէջ խորհրդարանական մեծամասնութիւնը այնքան ալ նշանակալից փաստ մը չէ, քանի երկիրը կառավարողները զինուորականներ են, որոնք քուէներով ընտրուած մարդիկ չեն, այլ՝ պարզապէս ինքնակոչ, բայց վճռական ուժ մը երկրին մէջ:

Զինուորականներուն համար շատ ձեռնտու է Էրդողանի կուսակցութեան նման կազմակերպութեան մը գոյութիւնը բեմին վրայ՝ տարբեր աշխարհներու՝ տարբեր ազդանշաններ տալու, օրինակ, իսլամական աշխարհին աւետելու, թէ աշխարհիկ (լայիք) երկրի մը մէջ իսլամական կուսակցութիւն մը կրնայ իշխանութեան տիրանալ, իսկ Արեւմուտքը ապահովեցնելու, թէ իսլամական իշխանութիւն մը Թուրքիոյ մէջ կրնայ Արեւմուտքին հաճոյ քաղաքականութիւն մը վարել:

Վերջին խորհրդարանական ընտրութիւններէն ետք Թուրքիա անմիջապէս լծուեցաւ ժողովի արշաւի մը. նորընտիր վարչապետ Աբդուլլա Գիւլ շրջեցաւ եւրոպական երկիրները եւ ըրաւ յայտարարութիւններ, որոնք հաճելի են եւրոպական ականջներուն. անոր յայտարարութեանց մէջ յանկարծ Կիպրոսի թնջուկը լուծելի հարցի մը վերածուեցաւ. ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղար Կոֆի Անանի կողմէ պատրաստուած ծրագիր մը քննութեան արժանի նկատուեցաւ թուրք պետութեան կողմէ: Իրականին մէջ Անանի այս առաջարկը ամէն կերպով նոպաստաւոր է թրքական կողմին. այնտեղ պահանջ չկայ 35.000 թրքական բանակները հեռացնելու կոչուած, այլ միայն խորհրդանշական զեղչ մը կատարելու անոնց թիւին մէջ: Ծրագիրը կը նախատեսէ երկու բաժիններէ կազմուած խորհրդարան մը եւ երկու հաստատներուն մասնակցութեամբ գոյանալիք դաշնակցային կառք իշխանութիւն մը. թուրքերու կողմէ կատարուելիք հողային աննշան զիջումը եթէ յաջողի, արդէն պիտի փաստէ, թէ գործնականին մէջ կոզին կը պատկանի երկու տարբեր պետութիւններու. խօսք չկայ այնտեղ Թուրքիոյ ցամաքամասէն բերուած 114.000 թուրքերու վերադարձին մասին: Թուրքիոյ ներքին գաւառներէն գաղթած այդ յեսամնաց թուրքերը, որոնք ընկերային խոշոր փորձանք մըն են նոյնինքն կիպրացի թուրքերուն, եւ բերուած էին այնտեղ հաւանական հանրաքուէի մը պարագային աւելցնելու թուրք ազգաբնակչութիւնը, որ 1976-ի թրքական արշաւանքէն առաջ 80.000 հոգի կը հաշուէր:

Ժողովներ արձակուեցան նաեւ Հայաստանի ուղղութեամբ, ենթադրել տալով, որ թրքական պետութիւնը մտադիր է վերջ մը տալու ադրիճի շրջափակման: Իսկ վարչապետ Գիւլ ֆողարկելով ցարդ կիրակուած հերքումի քաղաքականութիւնը, յայտնեց, թէ «ուսումնասիրենք ու հասկնանք, թէ իրապէս ցեղասպանութիւն կատարուա՞ծ է»:

Սակայն եւրոպական պետութիւնները բաւական փորձառութիւն ունին Թուրքիոյ խոստումին ու գործադրութեան միջեւ գոյութիւն ունեցող հեռաւորութիւնը չափելու:

Ժիսքար Դէսթէնի որակումով, Թուրքիոյ անդամակցութեան պատասխանները կը նկատուին եւրոպական Միութեան «բշնամիները»: Այդ իմաստով այդ «բշնամիներէն» մէկն ալ կը թուի ըլլալ Ամերիկայի պատասխանութեան փոխ նախարար Փոլ Վոլֆովիցը, որ վերջերս ձեռնարկեց եւրոպական շրջագայության մը՝ ի վերջոյ իր շունչը առնելու համար Անկարայի մէջ: Պրն Վոլֆովիցի համար առանց Թուրքիոյ մասնակցութեան եւրոպական Միութիւն մը «անըմբռնելի» կը մնար:

Անշուշտ, Ամերիկան առաջնորդուած է իր սեփական շահերէն՝ Վոլֆովիցի միջոցաւ թրքամէտ քաղաքականութիւն մը կիրարկելու. այդ քաղաքականութիւնը կը բաղկանայ մօտակայ ու հեռակայ կարգ մը նպատակներէ. ա) առաջին հերթին Ամերիկան կ՚ուզէ Թուրքիան վարձատրել եւրոպայի հաշուոյն՝ Իսրայէլի հետ ունեցած անոր սերտ կապերուն համար, իբրեւ միակ իսլամական երկիր Իսրայէլի սաստ հանդիսացող Թուրքիան կը կատարէ ամէնէն նշանակալից դերը իսրայէլեան տիրապետութիւնը (hegemony) հաստատելու համար Միջին Արեւելքի մէջ եւ բ) Թուրքիոյ գործակցութիւնը ապահովելու Իրաքի դէմ ծրագրուող արշաւանքի մը պարագային:

Իսկ հեռակայ նպատակն է թերեւ փուչ Թուրքիան խրել եւրոպայի կողին, որ հարկ եւ պատշաճ պարագային խափանէ այն ծրագիրները, որոնք կը բխին զուտ եւրոպական շահերէ եւ կրնան հակադրուիլ ամերիկեան շահերուն. այդպիսի հակասութիւն մը դրսեւորուեցաւ արդէն վերջերս, երբ Գերմանիոյ վարչապետը, իր ընտրարշաւի օրերուն, կտրուկ կերպով մերժեց մասնակցիլ Իրաքի դէմ մղուելիք պատերազմի մը: Եւ այդ առիթով աշխարհի հզօրագոյն պետութեան պատասխանատուութեան նախարարը իր քաղաքական ու դիւանագիտական հասունութեան մակարդակը ցոյց տուաւ ՆԱՏՕ-ի ժողովին՝ անտեսելով Գերմանիոյ ներկայացուցիչը, նաեւ էն պահելով այդ երկիրին դէմ:

Այս երեւոյթը նաեւ վտանգաւոր ազդանշան մըն է միւս պետութեանց, որ որեւէ երկիր իրաւունքը չունի տարակարծիք ըլլալու ամերիկեան աշխարհակալութեան կամ հետաքնդելու իր սեփական շահերը, եթէ անոնք ներհակ են Ամերիկայի պետական մարդոց քմայքներուն:

Մինչ Վոլֆովիցի պատճառաբանութիւնները առաջնորդուած են քաղաքական առօրեայ եւ անմիջական շահերով, անդին Խավիէր Սոլանա, եւրոպական Միութեան արտաքին եւ ապահովութեան գործերու գերագոյն ներկայացուցիչը, դեկտեմբեր 9-ին «Նիւ եորք թայմզ»-ի մէջ յօդուած մը հրատարակելով, կը փորձէր աւելի չափաւոր դիրք մը որդեգրել. ըստ իրեն՝ Թուրքիոյ տեղը եւրոպայի մէջ շատ որոշ է, սակայն Թուրքիոյ պետութեան կը մնայ ինքզինքը արժեցնելով տիրանալ այդ տեղին:

Պրն Վոլֆովից յայտնի թրքասէր մըն է, տակաւին քանի մը ամիս առաջ ժողովեցաւ հրապարակաւ «օրինակելի» հռչակել թրքական պետութեան վերաբերումը իր փոքրամասնութեանց նկատմամբ: Եւ այսօր ալ, անտեսելով Թուրքիոյ մէջ շարունակուող քաղաքական բռնաբարումները, փոքրամասնութեանց հալածանքները կ՚ելլէ եւ Լոնդոնի իր ելոյթին մէջ կը յայտարարէ. «Թուրքիան արժանաւոր տիպար մը կը հանդիսանայ իսլամական մեծամասնութիւն ունեցող այն երկիրներուն համար, որոնք կը ջանան իրականացնել ազատութեան, աշխարհականութեան եւ ժողովրդավարութեան նպատակները»:

Վոլֆովից գուցէ միամիտ հաւատացողներ գտնէ այս երկիրին մէջ, սակայն եւրոպացիներն ու Թուրքիոյ դրացիները միայն քմծիծաղ կրնան արտայայտել անոր անհիմն հաստատումներուն նկատմամբ:

Հայկական տեսանկիւնէ Թուրքիոյ անդամակցութիւնը եւրոպական Միութեան կրնայ երկայրի սուր մը դառնալ. առաջին հերթին Թուրքիոյ հայ համայնքը կը յուսայ, որ նման պարագայի մը պիտի կրնայ աւելի բեթեր շնչել, եւ թէ եւրոպական Միութեան անդամ Թուրքիա պատ մը պիտի վարանի փոքրամասնութիւնները ճնշելու եւ անոնց ինչքերը յափշտակելու իր քաղաքականութեան մէջ. գուցէ այդ հեռանկարէն թելադրուած է, որ Թուրքիոյ հայոց պատրիարքը՝ Մեսրոպ արք Մութաֆեան, թուրք պետութեան քաջալերանքով եւ վստահաբար նաեւ՝ ծախսով, եւրոպական մեծ շրջադարձ մը ձեռնարկեց՝ պատշաճելու համար Անկարայի քաղաքական ծրագիրները, երբ անդին կը խուսափի հայկական խնդիրներու շուրջ լրագրողներու հարցումներուն պատասխանելու, պատճառաբանելով, թէ ինքնաքաղաքականութեան չի խառնուիր, ինքնիշխան կրօնական մը է:

Հայաստանի պարագային եւս. խորհողներ կան, թէ եւրոպական Միութեան անդամ Թուրքիա մը պիտի զգուշանայ Հայաստանի հողային ամբողջականութեան պաշտպանելու կամ երեւանը ռմբակոծելու (ինչպէս ատենին պատահեցաւ էր Էգեր) եւ կամ տնտեսական շրջափակման օղակի տակ առնելու զայն:

Միւս կողմէ, սակայն, խորհողներ ալ կան, որ Թուրքիա իր քիչին եւ զինուորական ուժին կշիռով կրնայ խափանել եւրոպական խորհրդարանի մէջ առնուելիք որեւէ նախաձեռնութիւն, որ կը փորձէ ճանչնալ Հայկական ցեղասպանութիւնը կամ խօսք ընել հատուցման մասին:

Այն պարագային, երբ Հայաստան անդամակցի եւրոպական Միութեան, սկզբունքով արդէն հրաժարած պիտի ըլլայ ուրիշ անդամի մը նկատմամբ ունեցած իր հողային պատմական իրաւունքներէն, պայման մը, որուն Թուրքիա հետամուտ է երկար ատենէ ի վեր եւ իրեն պիտի շնորհուի արծաթէ ափտի մը վրայ:

Այսօր պատմական վճռորոշ հանգրուանի մը առջեւ կը գտնուի այն աշխարհամասը, ուր խարսխուած է Հայաստանը: Հարցականները բազում են եւ սոյգ պատասխանները՝ սակաւ:

Միայն կարելի է եզրակացնել, թէ բախտաւոր են այն երկիրները, որոնք դրացի չեն Թուրքիոյ...

Թեստոյթ. ԱՄՆ



Ծաղրանկարը ֆրանսական «Էքսպրես» հանդէսից

Թուրքիան՝ Եւրոպայի դռներուն առջեւ

ԵՐՈՒԱՆԴ ԱԶԱՏԵԱՆ

ԻՐԱՔՅԱՆ ՃԳՆԱԺԱՄ

Բուշն ու Պուտինը ախորավայր են ընտրում Հուսեյնի համար

Գերմանական «Թագեսցայթունգ» թերթի տվյալներով, Ռուսաստանն ԱՄՆ-ի հետ համատեղ փորձում է Իրաքի նախագահ Սադդամ Հուսեյնին դրդել պաշտոնաթողության եւ տարագրության: Ռուսական եւ ամերիկյան դիվանագիտական աղբյուրներից ստացված տեղեկություններ վկայակոչելով՝ թերթը գրում է, որ նախագահ Վլադիմիր Պուտինը հանդես է եկել «խաղաղ նախաձեռնությամբ», որպեսզի հնարավոր լինի խուսափել Իրաքի պատերազմից: 2002 թ. նոյեմբերից ռուսաստանցի պաշտոնական անձինք Բաղդադ են մեկնում պարզելու, թե ինչպիսի պայմաններում են հնարավոր Հուսեյնի պաշտոնաթողությունը եւ նրա տարագրությունը Ռուսաստան: Հուսեյնի համաձայնության դեպքում Պուտինը Բաղդադ կգործուղի իր բանագնացին: Ծայրահեղ դեպքում Պուտինն անձամբ այնտեղ կմեկնի Հուսեյնին համոզելու:

Թերթի տվյալներով, տարեսկզբին կայացած հեռախոսազրույցի ընթացքում ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը Պուտինին խնդրել է ակտիվացնել ջանքերն այդ ուղղությամբ: Բուշը խոստովանել է, որ կուզենար հակաիրաքյան պատերազմից զերծ մնալ դրա վիթխարի ծախսերի, ինչպես նաեւ ԿԺԴՀ-ի հետ հակամարտության խորացման պատճառով: Թերթին հայտնի

է դարձել, որ Բաղդադ մեկնած ռուսաստանցի պաշտոնական անձինք փորձում են իրաքցի բանակային պաշտոնյաներին եւ ուժային նախարարներին դրդել խռովության:

Այդ գործողությունների, ինչպես նաեւ իրաքյան ընդդիմության հետ Մոսկվայի շփումները դեկտեմբերի կեսերին հանգեցրին բազմամիլիարդանոց նավթային պայմանագրի չեղարկմանը, որն Իրաքն ու Ռուսաստանը կնքել էին ՄԱԿ-ի տնտեսական պատժամիջոցների վերացումից հետո: Չի բացառվում, որ Հուսեյնի պաշտոնաթողությանն ուղղված Ռուսաստանի քայլերի պատճառով Բաղդադում կազմվելիք նոր կառավարությունը չեղյալ հայտարարի 1991 թ. պատերազմից հետո կնքված ռուս-իրաքյան նաեւ մյուս տնտեսական համաձայնագրերը:

Ռուսական «խաղաղ նախաձեռնության» շնորհիվ Իրաքի վարչակարգի փոփոխումը կհամարվեր Պուտինի մեծ հաջողությունը, թեեւ ԱՄՆ-ը եւ Մեծ Բրիտանիան դա կարող են ներկայացնել իբրեւ սեփական քաղաքականության հաջողություն

Մեծ Բրիտանիան կոչ է անում հետաձգել Իրաքի պատերազմը

Մեծ Բրիտանիան կուզենար, որ հակաիրաքյան պատերազմը հետաձգվի մի քանի ամսով, թերեւս մինչեւ աշուն: Լոնդոնում գտնում են, որ դա միջազգային տեսուչներին ավելի շատ ժամանակ կտար գտնելու Սադդամ Հուսեյնի կողմից ՄԱԿ-ի բանաձեւերի նոր խախտումների համոզիչ ապացույցներ: «Դեյլի թելեգրաֆը» երեկ գրեց, որ Մեծ Բրիտանիայի կառավարությունն առայժմ իրավաբանական հիմքեր չի տեսնում պատերազմ սկսելու համար, չնայած Պարսից ծոցում դաշնակիցների ռազմական ներկայության աճին:

«Վարչապետ Թոնի Բլերը հասկացրեց, որ քանի դեռ ակնհայտ ապացույցներ չեն հայտնվել, տեսուչներին պետք է հետագա որոնումների ժամանակ տվի», ընդգծել է կառավարության բարձրաստիճան աղբյուրներից մեկը:

Բուն կառավարությունում տարակարծություններ կան ռազմական գործողությունների առնչությամբ: Պաշտպանության նախարար Ջեֆրի Հունն արտգործնախարար Ջեկ Սթրոյին հանդիմանում է, թե նա նվազեցնում է պատերազմ սկսելու հնարավորությունները: Չորեքշաբթի օրը Համայնքների պալատում ելույթ ունենալով՝ վարչապետ Բլերը փորձեց հարթել տարաձայնությունները: Սակայն, ըստ «Դեյլի թելեգրաֆի», վարչապետին հայտնի է, որ Լեյբորիստական կուսակցության պատգամավորներից շատերը դեմ են պատերազմին Մեծ Բրիտանիայի մասնակցությանը առանց Անվտանգության խորհրդի թիվ 1441 բանաձեւի պայմանների խախտման համոզիչ ապացույցների: Համայնքների պալատում կայացած կարծիքների փոխանակումը ցույց տվեց, որ վարչապետը լուրջ ընդդիմության կհանդիպի, եթե որոշի Իրաքի պատերազմին մասնակցել առանց ՄԱԿ-ի թույլտվության:

ԱՄՆ հաջորդ նախագահ կարող է դառնալ ուղղափառ հրեա Ջոզեֆ Լիբերմանը

Դեմոկրատ սենատոր Ջոզեֆ Լիբերմանը որոշել է մասնակցել 2004 թ. ԱՄՆ նախագահական ընտրություններին, հաղորդում է CNN հեռուստաընկերությունը: Նախագահական ընտրություններին մասնակցելու որոշման մասին Լիբերմանը պաշտոնապես կհայտարարի երկուշաբթի, Քոնեթիկուտ նահանգի Ստամֆորդ քաղաքում: Նախագահական ընտրություններին Դեմոկրատական կուսակցությունից հրաժարվել են մասնակցել 2000 թ. ընտրություններում պարտված Ալբերտ Գորը եւ Սենատում դեմոկրատների առաջնորդ Թոմ Դաշլը:

Ջոզեֆ Լիբերմանը լայն ժողովրդայնություն ձեռք բերեց 2000 թ. նախագահական ընտրություններում, երբ թեկնածությունն էր դրել ԱՄՆ փոխնախագահի պաշտոնում: Ուղղափառ հրեա է: Սոցիոլոգիական հարցումները ցույց են տալիս, որ Լիբերմանին հիմնականում պաշտպանում է ԱՄՆ հրեա եւ սեւամորթ բնակչությունը:

ՀԱՍԱՐՈՍ

Գերմանիայում ցրտից մարդիկ են մահացել

ԲԵՌԼԻՆ, 9 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Կտրուկ ցրտելը Գերմանիայում, որն այստեղ սկսվել է երկրի տարբեր տարածաշրջաններում արտասովոր «ձմեռային» ջրհեղեղներից հետո, արդեն հանգեցրել է գերստեղծումից չորս մարդու մահվան: Վերջին զոհը հայտնաբերվել է նախօրյակին: Դա եղել է 37-ամյա մի տղամարդ, որը ցրտահարվել է Արեւելյան Գերմանիայի Հալլե քաղաքում գտնվող սեփական տան պատշգամբում:

Անցած չորեքշաբթի օրվա գիշերը ԳՖՀ-ի առանձին տարածաշրջաններում գրանցվել է մինուս 25-30 աստիճան ցրտություն:

Հնդկաստանի մայրաքաղաքում +6 աստիճան ցուրտ

ԴԵԼԻ, 9 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հնդկաստանի մայրաքաղաքի բոլոր պետական դպրոցներում այսօրվանից մինչեւ երկուշաբթի դադարեցված են պարապմունքները: Քաղաքի իշխանությունները ծնողների խնդրանքներով նման որոշում են կայացրել Հնդկաստանի համար ցուրտ եղանակի պատճառով, որն սկսվել է երկրի հյուսիսային շրջաններում: Մայրաքաղաքում ջերմաչափը ցույց է տալիս ըստ Ցելսիուսի ընդամենը պլյուս 6 աստիճան:

«Սթար Նյուզ» լրատվական հեռուստաալիքի տվյալներով, Հիմալայներից ներխուժած ցուրտ օդի հոսանքները Հնդկաստանի հյուսիսում առնվազն 300 մարդու մահվան պատճառ են դարձել:

ՀԱՍԱՐՈՍ

Գոլանում խախտվել է 30-ամյա զինադադարը

«Ցահալի» զինվորները Գոլանի բարձունքներում, որոնց մի մասը օկուպացրել է Իսրայելը 1967 թ. վեցօրյա արաբ-իսրայելյան պատերազմում, գնդակահարել են սիրիացի մի զինվորի, եւս մեկին ձերբակալել Իսրայելի սահմանը խախտելու ամբաստանությամբ: Իր հերթին Սիրիան մեղադրել է Իսրայելին սիրիացի զինվորականի սպանության եւ 1973 թ. ստորագրված հրադադարը խախտելու մեջ: Պաշտոնական Դամասկոսը Գոլանի միջադեպը որակել է «համածայնագրի խախտում եւ չարդարացված սադրանք», հաղորդում է Ռոյթերը:

Հնդկաստանը միջին հեռահարության հրթիռներ է փորձարկում

Հնդկաստանի պաշտպանության նախարարության պաշտոնյաներից մեկը Ռոյթեր գործակալության թղթակցին հայտնել է, որ երեկ Բենգալական ծոցում հաջողությամբ փորձարկվել է «Ագնի-1» միջին հեռահարության հրթիռը: Երկիր-երկիր դասի 800 կմ հեռահարության հրթիռը, որն արձակվել է ծովային հարթակից, կարող է միջուկային լիցք կրել: Տվյալ հրթիռները վճռական դեր կարող են խաղալ Հնդկաստանի միջուկային ծրագրերում: «Ագնի» հրթիռների մեծ հեռահարության տարբերակն արդեն երկրի սպառազինության մեջ է եւ կոչված է կանխելու Չինաստանի հնարավոր հարձակումը: Միջին հեռահարության «Ագնի-1» տարբերակը կոչված է կանխելու Պակիստանի հարձակումները: Ռոյթերի տվյալներով, առաջիկա օրերին փորձարկվելու են հնդկական նաեւ ուրիշ հրթիռներ: Միաժամանակ հաղորդվում է Պակիստանում եւս հրթիռների փորձարկումների անցկացման մասին:

Զուգդիդում սպանվել է Վրաստանի առաջին նախագահի զինակից Բադրի Զարանդիան

Չորեքշաբթի երեկոյան Վրաստանի արեւմտյան Զուգդիդ քաղաքի սրճարաններից մեկում սպանվել է երկրի առաջին նախագահ Զվիադ Գամսախուրդիայի զինակից Բադրի Զարանդիան: Վրացական լրատվամիջոցները հաղորդում են, որ Զարանդիան մի կնոջ հետ նստած է եղել սրճարանում, երբ ոմն տղամարդ մտել եւ ավտոմատի դիմահար կրակոցներով սպանել է նրան: Մարդասպանը եւ նրան ուղեկցող երեք այլ հանցագործներ կարողացել են փախչել:

Բադրի Զարանդիան եւ «Մխեդրիոնիի» ղեկավար Ջաբա Իոսելիանին կազմավորել են «Վրաստանի հայրենասերների միություն» կազմակերպությունը եւ դրա համանախագահներն են: Իոսելիանին ըստ էության հայտարարել, որ Զարանդիայի սպանությունը քաղաքական է:

ԴԻԱՐԲԵՔԻՐ

Թուրքիայում օդանավի աղեսից 75 մարդ է զոհվել

Հունվարի 8-ի երեկոյան Ստամբուլից Դիարբեքիր թռած RI100 քառաշարժիչ օդանավն ընկել եւ ջախջախվել է Դիարբեքիրի օդանավակայանին մոտենալիս: Ֆրանսիական տվյալներով, օդանավում եղել են 75 ուղեւորներ եւ անձնակազմի 5 անդամներ (այդ թվում 2 օդաչու): «Թրքիշ էյրլայնզ» թուրքական ավիաընկերության օդանավի 75 զոհերի մեջ եղել են 8 օտարերկրացիներ: Փրկվել են 4 ուղեւորներ եւ անձնակազմի 1 անդամ: CNN-ի տվյալներով, նրանք հիվանդանոց են տարվել

շատ ծանր վիճակում: Փրկված ուղեւորներից մեկն Անատոլու գործակալության թղթակցին պատմել է, որ վայրէջքի պահին լսվել է խլացուցիչ աղմուկ, օդանավը բոցավառվել է եւ ջախջախվել: Աղետը տեղի է ունեցել տեղական ժամանակով 20-ն անց 12 րոպեին: «Բրիթիշ աերոսփեյս» ընկերության արտադրած օդանավը գնվել էր 1994 թ.:

Ֆրանսիրեսը հաղորդում է, որ 500 հազար բնակչություն ունեցող Դիարբեքիրի օդանավակայանը Թուրքիայի օդային խոշորագույն ռազմակայաններից մեկն է եւ ունի քաղաքացիական ու ռազմական բաժանմունքներ: Աղետը տեղի է ունեցել քաղաքացիական բաժանմունքի թռիչքաղաշտից մոտ 2 կմ հեռավորության վրա: 75-րդ զոհը 2 տարեկան մի աղջնակ, մահացել է հիվանդանոցում: ԱՄՆ Պետդեպարտամենտի ներկայացուցչի խոսքերով, զոհերի մեջ կա առնվազն 1 ամերիկացի: Մեծ Բրիտանիայի ԱԳՆ-ի տվյալներով, օդանավում առնվազն 2 բրիտանացիներ են եղել:

Թուրքիայի տրանսպորտի նախարար Բինալի Յիլդիրիմը լրագրողներին ասել է, որ աղետի պատճառներն առայժմ անհայտ են, բայց չի բացառել, որ գլխավոր պատճառը եղած լինի Դիարբեքիրը պարուրած մառախուղը: Վարչապետ Աբդուլլահ Գյուլը երեկ այցելեց աղետի վայր: Նա կտրականապես հերքեց այն ենթադրությունը, թե աղետը ահաբեկչության հետեւանք է:

Պ. Բ.

ԱԶԳ

Մշակույթ

Ազգային լեզուն անուշադրության դատապարտելու եւ դրա հետեւանքների մասին

«Ս եր ազգի պահողն էլ լեզուն ա ու հավատը. թե սրանց էլ կորցնենք, վայն էկել ա մեր օրին»

Խաչատուր Աբովյան

Ազգի երախտավորները հայրենը համարել են հայության էությունը, ինքնությունը, ոգին, արյունը, սրբությունը, պատիվն ու փառքը, գոյության, կենսունակության գրավականն ու պատվարը (Ա. Չոպանյան, Վ. Տերյան): Ընդգծել ու հավաստել են, որ հնագույն ժամանակներից սկսած ազգի մայրասեր ու մայրախնամ որդիները մոր պես են պահպանել, մոր պես են խնամել մայրենի սուրբ անունը կրող հայրենը (Պ. Սեւակ):

Նուկյալական հարաբերություններն անուշադրության մատնեցին, խաթարում լեզուն, որ հնարավոր չի լինում հասկանալ: Ասում են, որ նրանցից ոմանք դժվարանում են, չեն կարողանում գրածը կարդալ: Ակամա հիշեցնելով հանճարեղ Պարոնյանի նման դեպքերի համար անցյալում ասված «Բարով-խերով ելույթ չունենար» բառերը:

Հավատացեք, խնդրում եմ, ասվածը հաստատող գրառումների մի հսկայական կապոց ունեմ, որի մի զգալի մասը նրանց լեզվի սղագրություններն են: Առանց անուն ազգանունները տալու թվենք մի քանիսը. «Մենք պատգամավորներս մեր դեմը դրած կոճակը չենք ընդունում որպես պատասխանատվություն», «Ես միայն այսօր եմ կարդացել Վանո Սիրադեղյանի մեղքերի շղթան: Արտագաղթը մեծ նշանակություն ունի, մենք պետք է որոշենք, թե ինչպես դանդաղեցնենք, հետո էլ կկանգնեցնենք: Եթե ճշմարտությունը ներկայացնենք ժողովրդին, վստահության էլեմենտ կստանա», «Ինչ վերաբերում է ընդհանուր հաշվիչների վերաբերյալ, ես այդ մասին ասացի: Պրոցեսը կշարունակվի ելնելով ֆինանսական այն մասսայից, որ ունենք», «Անջրդի գյուղատնտեսությամբ զբաղվող ծյուղերում այս վիճակը կարող է հասցնել ազգագրության փոփոխությանը», «Գինը չի նշանակում ի օգուտ բանակցությունների: Նայած թե ի՞նչ մարժա ենք տալիս, ուրեմն գինը պետք է հանենք: Որեւէ խնդիր չկա: Խնդիրն այն է, թե մենք ի՞նչ ենք ուզում»:

Ազգային ժողովի լեզուն աղքատ է, միապաղաղ, չոր ու ցամաք: Հայրենի հարուստ բառագանձի բազմաթիվ բառերը մի կողմ նետած, օգտագործում են սխալ բառակապակցություններ՝ ասում են, կարծիքը կիսել փոխանակ համակարծիք լինել, հայացքը, տեսակետը կիսել-փոխանակ նույն տեսակետը, նույն հայացքն ունենալ, քննադատություն, առաջարկություն հնչեցնել, փոխանակ քննադատել, առաջարկել, ասում են աղետների արդյունքում-փոխանակ աղետների պատճառով, հետեւանքով, ցանկացած անօրինականություն, ցանկացած սպանություն եւ այլն, փոխանակ յուրաքանչյուր, ամեն մի, ամեն, գոյություն ունեցող, կարվող, առկա եւ այլն: Թվարկվածները եւ շատ շատերը, որոնք չենք նշում, ցանկալի, ցանկացած լինել չեն կարող:

Հայի լեզվամտածողությանն անհարիր են ժամանակի մեջ տեղավորվել, մի տարվա (կամ մեծ ու փոքր այլ ժամանակների) կտրվածքով, տնտեսական հարթությունից քաղաքական հարթություն տեղափոխել, իմ անձնական կարծիքով, սեփական աչքերով արտահայտություններ: Բանականությանը դեմ եմ հանդիպման շրջանակներում, բյուջեի ճեղքվածքի շրջանակներում, չարագործությունների, աղետների արդյունքում (փոխ. հետեւանքով, պատճառով) եւ այլն, եւ այլն:

Ազգային ժողովում ազգային լեզուն խաթարելն ու աղավաղելը, լեզվին չտիրապետելը չափազանց տգեղացնող, վտանգահարույց է, որովհետեւ Ազգային ժողովը նաեւ օրենսաստեղծ մարմին է: Ծանոթանալով մի քանի օրենքների, հատկապես գովազդների, հեռուստառադիոընկերությունների մասին օրենքներին, համոզվեցինք ու ցավ զգացինք, որ դրանց ծագումը հայկական չէ: Թարգմանված են այլ լեզվից, ամենից հավանական է ռուսերենից, որի ժամանակ բացակայել են ռուսերենի, հատկապես հայերենի իմացությունը եւ թարգմանական արվեստի ամենատարրական գիտելիքները: Օրենքները «ընդունելուց» հետո բազմիցս լսում ես «այսինչ կամ այնինչ օրենքի մասին առաջարկություններ, փոփոխություններ մտցնելու մասին հարցի քննարկումը» արտահայտությունը, «մասին» բառի զայրացնող, անտեղի կրկնությամբ: Բազմաթիվ են այն հոդվածները, որոնք գրված են անհասկանալի հայերենով: Տվյալ դեպքում մեր նպատակը չէ օրենքների էությունը, լեզուն քննարկելը, բայց դատարկախոսի տհաճ գնահատականից խուսափելու միտումով նշենք մի երկու օրինակ.

Գովազդն ի՞նչ կապ ունի անվտանգ երթեւեկության հետ, որ օրենսաստեղծները հավատում են, թե «Անվտանգ երթեւեկության ապահովման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը տահմանափակումներ է մտցնում տրանսպորտային միջոցներում առանձին գովազդների տեղաբաշխման ուղղությամբ» (հ. 12): Հայերեն չէ սահմանափակումներ մտցնել «գովազդների տեղաբաշխման ուղղությամբ» արտահայտությունը, սխալ իմաստով է գործածված «առանձին» բառը: Ցնցվում ես զարմանքից, աչքերիդ չես հավատում, երբ հ. 18-ի 5-րդ կետում կարդում ես. «Գովազդի բառացի ճշմարտացիությունը չի պատշաճում այն անբերախիղճ համարվելուց, եթե գովազդի ընդհանուր բովանդակությունը հասկացված է այլ իմաստով»: Խոսքի բառացի ճշմարտացիությունը չափազանց դրվատելի հատկանիշ է, դրա առկայության դեպքում ինչպե՞ս կարող է գովազդի բովանդակությունն այլ կերպ հասկացվել, էլ ի՞նչն է պատշաճում գովազդն անբարեխիղճ համարվելուց:

Օրենքները սահմանում են ու մի կողմ քաշվում: Ոչ ոք հետամուտ չի լինում դրանց կատարմանը: Այսօր էլ ամեն օր, մի քանի անգամ էկրանից լսում ենք տարօրինակ, անհասկանալի գովազդներ: «Ինտերպենդիում 4 թվային համակարգիչը ձեր թվային տիեզերքի կենտրոնն է»: Ցուցադրում են մրգեր եւ ասում. «Ահա, այս մրգերից են պատրաստում «Սիս» հյութերը, ոչ մի գարշանք այստեղ չի խառնվում», «Արարատ» ֆիլմն անցյալի իշխանությունն է ներկայի նկատմամբ» եւ այլն:



ՄԻՐՈՒԲ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ-ԹԱՓԱԼՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

ԱՄՆ

Ծննդյան տոները հայերը նշեցին

Հույս, հավատ եւ երջանկություն՝ երեխաներին

«Մենք շարունակում ենք նշել Սուրբ Ծննդյան տոները: Դա կարեւոր է, որովհետեւ մենք պետք է ամեն օր հիշենք Աստծո հայտնությունն ու ներկայությունը մեր մեջ», ասել է Ամերիկայում Հայաստանյայց եկեղեցու Արեւելյան թեմի առաջնորդ Խաժակ արք. Պարսամյանը հունվարի 4-ին՝ Նյու Յորքի Սբ. Վարդան հայկական եկեղեցում հավաքված երեխաներին եւ նրանց ծնողներին: Ըստ էլեկտրոնով ստացված տեղեկատվության, 350 երեխաներ տարբեր նահանգներից (Կոնեկտիկուտ, Փենսիլվանիա եւ այլն) Նյու Յորք են ժամանել երթեւեկության տարբեր միջոցներով՝ մասնակցելու հայկական եկեղեցու հատուկ իրենց համար կազմակերպած ցերեկույթին:

Եկեղեցական արարողությունից հետո երիտասարդները ներկա են գտնվել Հայկ եւ Ալիս Քավուկչյան դահլիճում կազմակերպված յուրահատուկ ընդունելությանը, որի ընթացքում նրանց ողջունել է ավանդական Ձմեռ պապին եւ նվերներ բաժանել:

Առաջնորդ հայրը նման հանդիպում կազմակերպելու է նաեւ հունվարի 11-ին Սբ. Մեսրոպ հայկական եկեղեցու երեխաների համար:

Հ. Ծ.

Հիշեցրեց ջահելությունը

Հայաստանում երեւի լավ են հիշում 70-ական թվականների թերեւս ամենաճանաչված արեւմտյան երաժշտական կոլեկտիվին՝ Պոլ Մորիայի նվագախմբին: Այն տարիներին այդ ֆրանսիական նվագախումբը զարմանալիորեն մուտք էր գործել մեր փակ երկիրը եւ ինքնուրույն ու ֆրանսիացի նշանավոր երգիչների հետ համերգներով դարձել էր խորհրդային երաժշտասերների կուռքը: Պրոֆեսիոնալ բարձր մակարդակը, լիրիկական քնքուշ մեղեդիները խորապես հուզում էին կոմունիստական սանդարտներից հոգնած մարդկանց: Հետաքրքրական է, որ նվագախմբի հիմնադիր Պոլ Մորիային երաժշտական մեծ աշխարհ է հանել մեր հոչակավոր հայրենակից Շարլ Ազնավուրը: Եվ վերջինիս հեղինակած շատ մեղեդիներ հնչել ու հնչում են նվագախմբի կատարմամբ:

Օրերս լեգենդար կոլեկտիվը նորեն Մոսկվայում էր եւ եզակի համերգ ունեցավ Կրեմլի համերգասրահում: Զարմանալի չէր, որ միջոցառմանը ներկա էին նաեւ զգալի թվով հայեր: Գուցե նաեւ նրանց ծառայությունն էր, որ ամենամեծ օվացիային արժանացավ Արամ Խաչատրյանի «Սուսերով պարի» շեղ իմպրովիզացիան:

Նոստալգիա՝ սա էր համերգասրահում տիրող մթնոլորտը, ներկաներին միավորող զգացումը: Ոմանք հիշում էին ջահելությունը, մյուսները՝ երբեմնի միօրինակ, բայց հանգիստ կյանքը, երրորդներն իրենց տրամադրում էին լավատեսորեն եւ այլն: Իսկ ես... Ողջ համերգի ընթացքում աչքիս առաջ այն տարիների երեւանն էր, համալսարանը, ուսանողական կյանքը, հանրակացարանը, «պրոսպեկտի» պոնչիկանոցը, Թիմուրի տաղակած կարտոֆիլը՝ նրբերշիկով, Անդոյի էյաբաբը...

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա

ԹԱՂՐԱՆԿԱՐՅԻ ԱՉՔԵՐՈՎ



«100-ի ակումբը» համալրումների է սպասում

Մրցաշրջան-2002-ն արգասաբեր էր ակումբի համար

Արդեն 8 տարի հիմնադրվել է հայկական ֆուտբոլի ամենաարդյունավետ ֆուտբոլիստներից մեկի՝ Խորեն Հովհաննիսյանի անվան ռմբարկուների խորհրդանշական «100-ի ակումբը»: Այն յուրօրինակ խթան է եղել ՀՀ առաջնությունների մասնակից ֆուտբոլիստներից շատերի համար, որոնք ձգտել են ընդգրկվել ակումբի շարքերը: Անցած մրցաշրջանը բավական արգասաբեր էր ակումբի համար, որի շարքերը համալրեցին «Փյունիկի» հարձակվող, առաջնության լավագույն ռմբարկու եւ խաղացող Արման Քարամյանն ու սպարտակցի Արթուր Քոչարյանը: Հատկապես տպավորիչ էր Արման Քարամյանի ցուցանիշը: 2001 թ. մրցաշրջանից հետո Արմանն ակումբի հաշվարկով իր օգտին գրանցել էր 74 գնդակ: Կասկած չկար, որ նրան կհաջողվեր խփել անհրաժեշտ 26 գնդակները: Բայց Արմանը գերազանցեց բոլոր սպասելիքները՝ մրցաշրջան-2002-ի պաշտոնական մրցումներում խփելով 50 գոլ, որի շնորհիվ «100-ի ակումբում» ընդգրկվեց լավագույն հնգյակում: Բացի այդ, Քարամյանը ՀՀ առաջնություններում խփած գոլերի թիվը հասցրեց 100-ի, ինչը մինչ այդ հաջողվել էր միայն 5 ֆուտբոլիստի:

Իսկ ահա Արթուր Քոչարյանին երանելի բարձունքի հաղթահարումը շատ մեծ դժվարությամբ տրվեց, թեեւ անհրաժեշտ էր խփել ընդամենը 3 գոլ: Սակայն Քոչարյանի նշանառությունը խախտվել էր, ուստի նա միայն առաջնության վերջնագծում ձեւակերպեց անդամության տոմսը: Գոլերից առաջինը Քոչարյանը խփեց գավաթի կիսաեզրափակիչում «Արարատի» դարպասը: 2-րդ գոլը գրանցվեց Կաղանում՝ հուլիսի 22-ին: Իսկ ահա, հոբելյանական գոլին հարկ եղավ սպասել եւս 3 ամիս: Հոկտեմբերի 20-ին «Լոռու» հետ խաղում խաղընկերները նրան վստահեցին 11 մ հարվածի իրացումը, սակայն ավելորդ հուզմունքը խանգարեց դիպուկ հարված կատարել: 6 օր անց Գյումրիում վերջապես իրականացավ Արթուր Քոչարյանի երազանքը:

Ակումբի շարքերը համալրելու լավ հնարավորություն ուներ նաեւ Միհր Ավանեսյանը: Սակայն Իրանից վերադառնալուց հետո Միհրը միայն հուլիսից մասնակցեց «Զվարթնոցի» հանդիպումներին: Սկիզբը բավական խոստումնալից էր՝ 5 խաղում 5 գոլ: Բայց ֆինանսական խնդիրների հետ կապված շարածայնությունների պատճառով Ավանեսյանը որոշ ժամանակով հեռացավ թիմից, հետո կրկին վերադարձավ: Արդյունքում Միհրը «Զվարթնոցում» անցկացրեց ընդամենը 10 խաղ եւ խփեց 6 գնդակ: Մեկ գնդակ էլ նա իր օգտին գրանցեց ՈՒԵՖԱ-ի գավաթի մրցաշրջանում: Այսօր Միհրի օգտին գրանցված է 91 գոլ, եւ նա Մկրտիչ Հովհաննիսյանի հետ (96 գոլ) ակումբի անդամ դառնալու ամենառեալ թեկնածուն է:

Ակումբի գործող 2 անդամների՝ Տիգրան Եսայանի եւ Վարազդատ Ավետիսյանի համար մրցաշրջանը տարբեր կերպ դասավորվեց: Ճակատագրի բերումով երկուսն էլ ի վերջո հայտնվեցին միեւնույն թիմում՝ «Բանանցում»: Տիգրանը Լիբանանից վերադարձավ մայիսին, չմասնակցեց գավաթի մրցաշարին, բայց առաջնությունում «Բանանցում» արդյունավետ գործեց խփելով 11 գնդակ: Վերջին տարիներին Եսայանը հաճախակի է հայտնվել լեգեոնների կարգավիճակում, այլապես ակումբի հաշվարկով նրա ցուցանիշն ավելի բարձր կլիներ: Չնայած այժմ էլ նա լավ հնարավորություն ունի տեղ զբաղեցնելու 2-րդ հորիզոնականում:

Վարազդատ Ավետիսյանը հաջող սկսեց մրցաշրջանը՝ Մոսկվայում ԱՊՀ երկրների գավաթի մրցաշարում խփելով 2 գնդակ: Սակայն Օսկար Լոպեսի գլխավորած «Փյունիկում» նրա համար տեղ չգտնվեց, եւ Ավետիսյանը ստիպված էր առաջին շրջանն անցկացնել «Փյունիկ-2»-ում: Առաջնության 2-րդ կեսում նա հանդես եկավ «Բանանցում»՝ խփելով ընդամենը 2 գոլ: Մրցաշրջանը ծախողված պետք է համարել նաեւ Արամ Ոսկանյանի համար, որն ընդամենը 9 խաղում փոխարինման դուրս գալով, խփեց 1 գնդակ: Մրցաշրջանի մեկնարկը խոստումնալից էր «Միկայի» հարձակվող Արմեն Շահգելդյանի համար: Գավաթի մրցաշարում նա խփեց 5 գնդակ, գոլերի հաշիվը բացեց առաջնության մեկնարկային խաղում, աչքի ընկավ Անդորրայի հավաքականի հետ ընկերական մրցախաղում: Բայց վնասվածքի պատճառով նա մասնակցեց առաջնության ընդամենը 5 խաղի: Նախկինում արդյունավետությամբ աչքի ընկնող Շահգելդյանն էլ իր լավագույն տարիներն անցկացրեց լեգեոնների կարգավիճակում, այլապես նա էլ կարող էր ակումբի անդամ դառնալ: Չնայած այս տարի իր 30-ամյակը նշող Շահգելդյանն այժմ էլ լավ հնարավորություններ է պահպանում համալրելու ռմբարկուների ընտանիքը:

Անկասկած, մրցաշրջանը հաջող էր Հակոբյան եղբայրների համար: Արամն իր գոլերի թիվն ավելացրեց 22-ով (7-ը գավաթի մրցաշարում), Արան խփեց 21 գոլ: Ընդ որում, Արան չմասնակցեց գավաթի մրցաշարին, վնասվածքի հետեւանքով էլ անցկացրեց առաջնության ընդամենը 15 խաղ, այլապես նրա ցուցանիշն ավելի բարձր կլիներ: Արա Հակոբյանն էլ վերջին տարիներին հայտնվել էր լեգեոնների կարգավիճակում: Ակումբի հաշվարկում նրա հաշվին արդեն գրանցված է 83 գոլ եւ եթե հանդես գա ՀՀ առաջնությունում, ապա այս տարի կխփի հոբելյանական 100-րդ գնդակը: Իսկ Արամն արդյունավետ ելույթները շարունակելու դեպքում մոտակա տարիներին կընդգրկվի ակումբում: Նույնը կարելի է ասել Սարգիս Նազարյանի, Հայկ Հակոբյանի եւ Արարատ Հարությունյանի մասին: Իսկ ահա Անուշավան Փահլեւանյանը տարիներ շարունակ լինելով թեկնածուների կազմում, անցյալ մրցաշրջանում այդպես էլ չկարողացավ գեթ մեկ գնդակ խփել: Մրցաշրջանը բավական հաջող էր սկսել 38-ամյա Սամվել Նիկոլյանը, որը 6 խաղում խփել էր 3 գնդակ: Սակայն ակումբի ղեկավարության հետ տարաձայնությունների պատճառով նա հեռացավ «Լեռնագործից» հրաժեշտ տալով մեծ ֆուտբոլին:

Ամփոփելով մրցաշրջան-2002-ում «100-ի ակումբի» անդամների եւ թեկնածուների ելույթները, կարող ենք վստահորեն արձանագրել, որ ռմբարկուների խորհրդանշական ակումբի համար տարին արդյունավետ էր: Հուսանք, որ նոր մրցաշրջանում էլ ֆուտբոլիստներն աչքի կընկնեն արդյունավետ խաղով, եւ մենք առիթներ կունենանք շնորհավորելու նրանց «100-ի ակումբում» ընդգրկվելու առթիվ:

«100-Ի ԱԿՈՒՄԲ»

Ակումբի անդամները	Ա	Գ	Ս	Ե	Հ	ԱՊՀ	Ընդ.
1. Արսեն Ավետիսյան	150	23	-	3	1	5	182
2. Արթուր Պետրոսյան	125	15	1	-	9	2	152
3. Գեղամ Հովհաննիսյան	111	32	-	1	-	1	145
4. Տիգրան Եսայան	119	14	-	-	4	1	138
5. Արման Քարամյան	100	18	-	3	2	1	124
6. Վահե Յաղմուրյան	104	18	-	-	-	-	122
7. Սամվել Նիկոլյան	86	24	1	1	-	-	112
8. Վարազդատ Ավետիսյան	83	19	1	-	1	2	106
9. Շիրակ Սառիկյան	96	3	-	1	-	1	101
10. Արթուր Քոչարյան	81	16	-	-	4	-	101

ԱԿՈՒՄԲԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ

1. Մկրտիչ Հովհաննիսյան	87	9	-	-	-	-	96
2. Միհր Ավանեսյան	80	9	1	1	-	-	91
3. Արմեն Շահգելդյան	67	14	1	1	5	-	88
4. Արա Հակոբյան	69	7	-	-	5	2	83
5. Անուշավան Փահլեւանյան	72	8	-	-	-	-	80
6. Սարգիս Նազարյան	62	16	-	1	-	-	79
7. Արամ Ոսկանյան	67	6	1	-	1	-	75
8. Սեւադա Արզումանյան	58	12	-	-	-	-	70
9. Հայկ Հակոբյան	54	10	-	-	2	3	69
10. Կարեն Բարսեղյան	49	11	-	-	4	-	64
11. Արամ Հակոբյան	47	12	-	-	2	-	61

Պարեյրան կրկին ստանձնել է Բրազիլիայի հավաքականի ղեկը

59-ամյա Կառլոս Ալբերտո Պարեյրան 8-ամյա ընդմիջումից հետո կրկին գլխավորեց ֆուտբոլի Բրազիլիայի հավաքականը: Նրա գլխավորությամբ բրազիլացիները 1994 թ. ԱՄՆ-ում կայացած ֆուտբոլի աշխարհի առաջնությունում չորրորդ անգամ նվաճել էին ուժեղագույնի տիտղոսը՝ եզրափակիչում 11 մ հարվածներով հաղթելով Իտալիայի ընտրանուն: Այն ժամանակ հավաքականի առաջատարներն էին Ռոմարիոն ու Բեբետոն: Ինչպես եւ 1994 թ., այս անգամ էլ Պարեյրան աշխատելու է Մարիո Զագալոյի հետ, որը նշանակվել է խորհրդատու մարզիչ:

Բրազիլիայի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Ռիկարդու Տեյշեյրայի խնդրանքով Պարեյրան հրաժարվել է «Կորինթիանս» թիմում մարզչական հետագա գործունեությունից եւ իր ողջ ուշադրությունը հատկացնելու է հավաքականին, որի հետ նրա պայմանագրի ժամկետը մինչեւ 2006 թ. ֆուտբոլի աշխարհի առաջնության ավարտն է: Պարեյրայի առջեւ խնդիր է դրվել նախ աղահովել Բրազիլիայի հավաքականի մասնակցությունը Գերմանիայում կայանալիք ֆուտբոլի աշխարհի առաջնությանը, քանի որ, ըստ գործող կարգի, աշխարհի գործող չեմպիոնն էլ պետք է եզրափակիչ փուլի ուղեգրերը վիճարկի ընտրական մրցաշարում: Իսկ աշխարհի առաջնությունում Պարեյրան պետք է ձգտի իր սաներին հետ պահպանել չորս տարի առաջ նվաճած դիրքերը:

Պարեյրան եւ Զագալոն

Հիշեցնենք, որ Պարեյրան հավաքականի գլխավոր մարզչի պաշտոնում փոխարինել է Լուիս Ֆելիպե Սկոլարիին, որն այս մրցաշրջանում գլխավորելու է Պորտուգալիայի ազգային հավաքականը:

Հիդինգին փոխարինեց Կոելյուն

Ֆուտբոլի աշխարհի առաջնությունից հետո Հարավային Կորեայի հավաքականի գլխավոր մարզչի պաշտոնից Գուս Հիդինգի հեռանալուց հետո երկրի ֆեդերացիան որոնումներ մեջ էր: Եվ ահա հավաքական է հրավիրվել կրկին եվրոպացի մասնագետ, այս անգամ պորտուգալացի Ումբերտու Կոելյուն, որը 1997-2000 թթ. աշխատել է Պորտուգալիայի ազգային հավաքականում:

Գլխավոր մարզչի պաշտոնի թեկնածուներից էր նաեւ ֆրանսիացի Բրունո Մեթյուն, որի գլխավորությամբ Սենեգալի հավաքականն աշխարհի առաջնությունում հասել էր մինչեւ քառորդ եզրափակիչ: Նոր մարզչի գլխավորությամբ հավաքականի առաջին հանդիպումը նախատեսված է մարտի 29-ին Կոլումբիայի ընտրանու հետ:

ՇԱԽՄԱՏ

Կասպարովը կմրցի համակարգչի հետ

Հունվարի 23-ին Նյու Յորքում կկայանա Գարրի Կասպարով - «Deep Junior» շախմատային յուրօրինակ մրցախաղի հանդիսավոր բացման արարողությունը: Համակարգչային ծրագրերի միջեւ աշխարհի կրկնակի չեմպիոն «Deep Junior»-ի հետ աշխարհի 13-րդ չեմպիոնի առաջին պարտիան կանցկացվի հունվարի 26-ին: Հաջորդ պարտիաները նախատեսված են հունվարի 28-ին, 30-ին, փետրվարի 2-ին, 5-ին եւ 7-ին: 6 պարտիայից բաղկացած մրցախաղում կկիրառվեն դասական շախմատի կանոնները: Մրցաշարի կազմակերպիչներն են ՖԻԴԵ-ն եւ համակարգչային խաղերի միջազգային ասոցիացիան: Մրցաշարի մրցանակային ընդհանուր հիմնադրամը 1 մլն դոլար է: Դրանից 500 հազարը կազմում է Կասպարովի հոնորարը, որը նա կստանա միայն մասնակցության համար, անկախ մրցամարտի արդյունքից: Մնացած գումարից 300 հազարը կստանա մրցամարտի հաղթողը: Նշենք, որ սա առաջին դեպքը չէ, երբ Կասպարովը մրցում է համակարգչի հետ:

ԱՆԳԼԻԱ

Անհաջողություն Շեֆիլդում

Անգլիայի լիգայի գավաթի կիսաեզրափակիչ առաջին խաղում անհաջողության մատնվեց հանրահայտ «Լիվերպուլը»՝ հյուրընկալվելիս 1-2 հաշվով զիջելով ցածր դիվիզիոնում հանդես եկող «Շեֆիլդ յունայթեդ» թիմին: Խաղասկիզբը հաջող էր Ժերար Ուլյեի սաների համար, որոնք 35-րդ րոպեին բացեցին հաշիվը: Բայց նրանք չկարողացան պահպանել հաղթական հաշիվը: Խաղավերջում, ընդամենը 6 րոպեում Տոնգեն երկու անգամ գրավեց «Լիվերպուլի» դարպասը՝ հաղթանակ պարգեւելով «Շեֆիլդ յունայթեդին»: Եզրափակիչի ուղեգրի հարցը կվճռվի պատասխան խաղում: Կիսաեզրափակիչի մյուս խաղում՝ Մանչեսթրում ուժերը չափեցին «Մանչեսթր յունայթեդը» եւ ներկայիս գավաթակիր «Բլեքբյոռնը»: Խաղն ավարտվեց ոչ-ոքի (1-1): Հաշիվը 59-րդ րոպեին բացեց դաշտի տերերի խաղացող Սկոուլզը, 3 րոպե անց Թոմփսոնը վերականգնեց հավասարակշռությունը: Հանդիպման հերոսն, անկասկած, 17-ամյա ծախ պաշտպան Ջեյմս Մակիվլին էր, որն ամբողջ խաղի ընթացքում «չեզոքացրեց» Բեքհեմին, իսկ խաղավերջում Սուլշերի հարվածից հետո գնդակը հեռացրեց դատարկ դարպասից:

Չիլավերտը վերադառնում է հայրենիք

Պարագվայցի հանրահայտ դարպասապահ Խոսե Լուիս Չիլավերտը 17 տարի արտերկրում խաղալուց հետո վերադառնում է հայրենիք, որտեղ հանդես է գալու տեղական «Չերո Պորտենո» թիմում: Ազգային հավաքականի 36-ամյա դարպասապահն արդեն պայմանավորվել է ակումբի նախագահ Լուիս Պոնտեի հետ:

Չիլավերտն անցյալ տարվա սեպտեմբերին հեռացել էր ֆրանսիական «Ստրասբուրգից»՝ պատճառաբանելով, որ ակումբը չի կատարում ֆինանսական իր պարտավորությունները եւ իրեն բավական խոշոր գումար է պարտք:

Չիլավերտը հայտնի է տուգանային եւ 11 մ հարվածների դիպուկ իրացմամբ: Դարպասապահի իր 20-ամյա կենսագրությունում, բացի հիմնական պարտականությունների կատարումը, Չիլավերտը տուգանային եւ 11 մ հարվածներով խփել է 50-ից ավելի գոլեր, ինչը յուրօրինակ համաշխարհային ռեկորդ է:

Էջը պատրաստեց
ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ

Օրվա հեստեղով

ՈՐՍԱԿԱՆ ՄԱՍՈՒ

Նոր ազատաեր շրջան Ռուսաստանում

Ռուսական նացիոնալիստական թերթերի մեջ միշ թե շաս «լուրջը» «Զավտրան» է, որ խմբագրում է գրող, հրապարակախոս, ազգային գործիչ Ալեքսանդր Պրոխանովը: Թերթը լայն ճանաչում չունի, բայց գուցե ռուս ազգայնական մտքի զարգացման ուղղություններին ծանոթ լինելու համար արժե ընթերցել: Համենայն դեպս, հանդիպում են ռուսամետ հեստաֆրֆրական վերլուծական նյութեր: Ոճն ագրեսիվ է, երբ խոսքը վերաբերում է ռուս ժողովրդի «թշնամիներին»՝ հրեաներին, կովկասցիներին, ամերիկացիներին եւ այլոց: Լալագին է, երբ «բացահայտվում է» ռուս ժողովրդի «ողբալի» վիճակը, այն է՝ իր իսկ երկրում հիշյալ թշնամիների միջոցով նա դարձել է ամենահալածված, ամենաօտարված, ամենահրավազուրկ ազգը: Թերթի սիրված հերոսները հրեա օլիգարխներն են՝ Աբրամովիչը, Ֆրիդմանը, Խոդորկովսկին, Դերիպասկան, Մամուտը, Ավենը եւ մյուսները: «Զավտրան» էապես նպաստել է Բերեզովսկու չարագուշակ կերպարի ստեղծմանը, բայց հիմա նրանք «բարեկամներ» են ընդդեմ Պուտինի: Առհասարակ Պրոխանովը մեծ ալերգիա ունի Պուտինից, որի «շնորհիվ» ամեն տարի 1 մլն ռուս է հեռանում կյանքից՝ անհամալրելի: Իսկ երբ խոսքը վերաբերում է Ելցինին, Պրոխանովի ոճը դառնում է միագույն՝ ատելություն է թափվում գրեթե ամեն մի տառից:

Ահա եւ թենիսի Դեւիսի խաղարկության ընթացքում նորեն «ասպարեզ եկած» Ելցինը բարձ ջուր լցրեց իր իսկ դեմ գործող ջրաղացին: Հիրավի Պրոխանովին ոչ ոք այնքան չի ոգեշնչում, ինչքան Ռուսաստանի առաջին նախագահը. ոչ բառ է մաղ գալիս, ոչ էլ արտահայտություն: Միայն մի պարբերություն՝ հեստաֆրֆրության համար. «Այդ դժոխքի ծնունդն իր չանչերով ծվատեց խորհրդային Միությունը, դժբախտացրեց ռուսներին, ուզբեկներին, դազախներին (հայերի մասին խոսք չկա- Ռ. Հ.): Աղքատության մեջ թաղեց, դաժան սրկության մատնեց ռուս մեծ ժողովրդին: Տանկերով գնդակոծեց խորհրդարանը: Իսկ հիմա անպատիժ, լկտիորեն գինովցած, տխմար խծիծաղով երեւում է կրեմլյան ընդունելություններում, սրամտություններ է անում, որոնցից վիժումներ են տեղի ունենում, շամպայն է լակում գավաթներից, այցելում է եկեղեցիներ, ոսնատակ է տալիս Բարվիխայի (մոսկովյան ընտրախավի հանգստավայրի- Ռ. Հ.) հողը՝ արահետներում թողնելով ծնեմարդու ճանկահետքերը»:

«Զավտրա» թերթի սիրված հերոսները

Զարմանալիորեն «Զավտրան» անհայտ պատճառներով աչքաթող արեց Ելցինի հայատանյաց այցը, թեեւ Ռուսաստանի ՁԼՄ-ները լայնորեն մեկնաբանեցին ուղեւորության ընթացքը՝ հատուկ նշելով, որ ժողովուրդը շաս ջերմ ընդունեց ռուսաց առաջին նախագահին, եւ վերջինս տիկնոջ հետ հյուրընկալ երկրից մեկնեց նույնքան ջերմ զգացմունքներով: Կամ գուցե Պրոխանովն իր այս «վրիպումն» է շտկել, Ելցինին նվիրված իր հերթական ջախջախիչ հոդվածը եզրափակելով միանգամայն անսպասելի մի հեստեւությամբ: Նա «փոքրիկ մի պատմություն» է հրամցնում «այն մարդկանց», որոնք ԽՍՀՄ-ի փլուզումը տակավին բարիք են համարում: Խորհրդային տարիներին, գրում է Պրոխանովը, Միտիչեի մոտ մի հրաշք անտառակ կար՝ չտրորված երիցուկներով ու զանգակածաղիկներով: Ելցինի ժամանակ տեղի «պեստեուշիկները» դարձան «բրատվա», հսկայական փողեր կողոպտեցին եւ բաղձալի անտառակում սկսեցին եռահարկ պալատներ կառուցել մավրիտանական ոճով: Շավարտեցին, ֆանգի հանցահավաքներում կոտորեցին իրար: Եվ հենց այստեղ Պրոխանովը փորձում է դրսեւորել իր կանխատեսիչ մտքի շռայլ փայլատակումը. այդ հսկա թերակառույցները գնել են հայերը, որոնք եկել են Ղարաբաղից, արծանագրում է հոդվածագիրը: Եվ այժմ, շարունակում է նա, դատելով ամեն ինչից, այստեղ կսկսվի ազատատեր փոքր շրջանի՝ անիծյալ կայսրությունից ազատագրվելու պայքարի նոր փուլը:

Սրամի՞տ է: Հիմա էլ թող «Ազգի» ընթերցողները «հեստեւություններ» անեն:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա

ԱՇԽԱՏՈՒԺ

Ռուսաստանն ավելի ու ավելի գրավիչ է դառնում իր հարեւանների համար

ՄՈՍԿՎԱ, 9 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Այս տարի Ռուսաստանում արտասահմանյան աշխատուժի թիվը 2002 թվականի համեմատությամբ կարող է ավելի քան կրկնապատիկ մեծանալ եւ գերազանցել 700 հազարից: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակցի հետ կայացած զրույցի ժամանակ այս մասին հայտարարել է ՌԴ-ի ազգային քաղաքականության գործերի նախարար Վլադիմիր Զորինը:

Նրա խոսքով, անցյալ տարի պաշտոնապես գրանցված օտարերկրացի քաղաքացիների թիվը, ովքեր Ռուսաստան էին ժամանել փող աշխատելու համար, «առաջին անգամ գերազանցել է 300 հազարից»: Իսկ սկսված տարում նրանց թիվն արդեն կարող է հասնել 500-ից մինչեւ 700 հազարի: Այս ամենը, նախարարի կարծիքով, «վկայում է այն բարենպաստ քաղաքականության մասին, որը մեր երկիրը վարում է օտարերկրացիների նկատմամբ»: «Ռուսաստանն ավելի ու ավելի գրավիչ է դառնում իր հարեւանների համար»,- նշել է նա:

Աշխատանքի նախարարության տվյալներով, ներկայումս Ռուսաստանում տարբեր մասնագիտությունների գծով կա ավելի քան 1 միլիոն թափուր աշխատատեղ, որոնց 73 տոկոսը կազմում են բանվորական մասնագիտությունները: Սկսված տարում օտարերկրացիներն առավելապես աշխատանքի կներգրավվեն շինարարության ճյուղում, գյուղատնտեսության, ավտոփոխադրումների բնագավառներում, ինչպես նաեւ արտասահմանյան տարբեր ներդրումային նախագծերի իրականացման ժամանակ:

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Երկհարկանի կապիտալ շինություն Քանաքեռում (Ֆանարջյան փ.) 1400 քմ մակերեսով: Ունի ցանկապատված կից տարածք (հողամաս) 2700 քմ մակերեսով եւ օժանդակ շինություններ (ավտոնանկներ, կաթսայատուն) 200 քմ մակերեսով, ընդհանուր տարածքը՝ մոտ 4300 քմ:

Շինություններն ունեն կապիտալ վերանորոգման կարիք: Տարածքն ունի երկկողմանի մուտք եւ կարող է ծառայել որպես հյուրանոց, ուսումնական կենտրոն, գրասենյակ կամ բնակելի տարածք: Գինը՝ 55.000 դոլար:

Հեռ.՝ (09)40-08-64 կամ 42-41-24

Microsoft CERTIFIED Partner
Microsoft CERTIFIED Technical Education Center
VUE

@rminco
Global Telecommunications

«Արմինկո» տեխնիկական ուսուցման կենտրոնը՝ «Եվրասիա» հիմնադրամի աջակցությամբ, ինֆորմացիոն տեխնոլոգիաների մասնագետներին ընձեռում է բացառիկ հնարավորություն մասնակցելու Microsoft ընկերության արտոնագրված էլիտար դասընթացներին:

Դասընթացների տեւողությունը՝ 2-5 օր:
Դասընթացների վերջում տրվում է Microsoft ընկերության արտոնագիր:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել 52-46-79 կամ այցելել Տիգրան Մեծի 4 (Հայարդնախագիծ ՓԲԸ շենք), 2-րդ հարկ, 251 սենյակ

http://www.microsoft.com/traincert/training

FULBRIGNT AMERICAN STUDIES
INSTITUTE PROGRAM 2003

The Bureau of Educational and Cultural Exchanges of the U. S. Department of State together with the United States Embassy in Armenia are pleased to announce the Fulbright American Studies Institute Program 2003. The program is designed as a rigorous six-week faculty level seminar for multinational groups of professionals (see eligibility criteria below). This year EIGHT institute programs are offered.

1. THE CIVILZATION OF THE UNITED STATES
2. U. S. CONSTITUTION: ORIGINS, EVOLUTION AND CONTEMPORARY ISSUES
3. U. S. FOREIGN POLICY: FOUNDATIONS AND FORMULATION
4. RELIGION IN THE UNITED STATES: PLURALISM AND PUBLIC PRESENCE
5. CONTEMPORARY AMERICAN LITERATURE
6. AMERICAN POLITICAL DEVELOPMENT: IDEAS AND INSTITUTIONS
7. MANAGING DIVERSITY: THE AMERICAN EXPERIENCE
8. FOREIGN SECONDARY EDUCATORS

Eligibility: Applicants should be university faculty including teachers, trainers, department chairs, curriculum developers, textbook writers, scholars as well as secondary school educators. Good knowledge of English is required as the seminars are conducted in English.
Program Funding: The U. S. Government will cover all institute costs, i. e. international travel and allowances; domestic travel and ground transportation; book, cultural, mailing and incidental allowances; admissions; housing and subsistence.

DEADLINE FOR SUBMISSION OF APPLICATIONS IS FRIDAY, JANUARY 17, 2003.
Application forms are available at the U. S. Embassy.

A short description of the programs posted on the Embassy notice board. For detalied information about the program, please contact Ms. Hasmik Mikayelyan at the Public Affairs Section of the U. S. Embassy in Armenia, E-mail: amerstudies@yahoo.com, Address: Baghramian Street 18, Yerevan.

Microsoft CERTIFIED Partner
Microsoft CERTIFIED Technical Education Center
VUE

@rminco
Global Telecommunications

VUE testing center affords the opportunity to take an exam of Microsoft, CIW, Cisco Systems and other firms. After positive result you will receive a certification of these firm.

More detail information you can get by address:

4 Tigran Mets str.
("HayardNakhagits" building),
2-nd floor, room 251
From 10.00 up to 17.30
Tel: 524-679

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիւ 65. Դասիչ 69150. Տպաքանակը՝ 5000 Ստորագրված է տպագրության՝ 9. 1. 2003 Գինը՝ 100 դրամ